

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՆԱԽՆԱԿԱՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ (ԱՐՅԵՍՏԱԳՈՐԾԱԿԱՆ)  
ԿՐԹՈՒԹՅԱՆ

2802 «ՄԱՆՎԱԾՔԻ ԵՎ ՄԱՆՎԱԾՔԱՅԻՆ ԻՐԵՐԻ  
ՏԵԽՆՈԼՈԳԻԱ» ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՊԼԱՆ ԵՎ  
ՄՈԴՈՒԼԱՅԻՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐ

ԵՐԵՎԱՆ 2010





**III. ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ՊԼԱՆԸ**

N	Առարկաների անվանումը և մոդուլները	Ատեստավորում ըստ կիսամյակների			Ուսանողի ուսումնական բեռնվածությունը (ժամ)				Բաշխումն ըստ կուրսերի և կիսամյակների										
		Քնն.	Ստուգաթղթ	Կուրս. աշխ.	Պարտադիր լսարանային բեռնվածություն			1-ին կուրս		2-րդ կուրս		3-րդ կուրս							
					Ընդամենը	Այդ քվում	Սեռական ուսուցում	Լաբոր. և գործն. աշխ	Սեմին. պարապմունք	1-ին կիս.	2-րդ կիս.	3-րդ կիս.	4-րդ կիս.	5-րդ կիս. 12 շաբ.	6-րդ կիս. 15 շաբ.				
1.	ԸՆԴՀԱՆՈՒՐ ՀՈՒՄԱՆԻՏԱՐ ԵՎ ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ																		
1.1	Հայոց լեզվի և խոսքի մշակույթի հիմունքներ	5	6		72	54	18									36	36		
1.2	Քաղաքագիտության և սոցիոլոգիայի հիմունքներ		5տ		18	14		4							18				
1.3	Իրավունքի հիմունքներ		6տ		36	30		6										36	
1.4	Պատմություն	5			36	30		6								36			
1.5	Օտար լեզու		5,6տ		60	24	36								24	36			
1.6	Ֆիզիկական կուլտուրա		5,6տ		54	6	48								24	30			
	<b>ԸՆԴԱՄԵՆԸ</b>				<b>276</b>	<b>158</b>	<b>102</b>	<b>16</b>							<b>138</b>	<b>138</b>			
2.	ՄԱԹԵՄԱՏԻԿԱԿԱՆ ԵՎ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆԱԳԻՏԱԿԱՆ																		
2.1	Էկոլոգիայի հիմունքներ		5տ		36	28	8								36				
2.2	Քաղաքացիական պաշտպանություն և արտակարգ իրավիճակների հիմնահարցեր		6տ		18	14	4											18	
	<b>ԸՆԴԱՄԵՆԸ</b>				<b>54</b>	<b>42</b>	<b>12</b>								<b>36</b>	<b>18</b>			
3.	ԱՌԱՆՑՔԱՅԻՆ ՀՍՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ																		
3.1	Ընդհանուր աշխատանքային գործունեության հմտություններ		5տ		36	24	12								36				
3.2	Հաղորդակցություն		5,6տ		36	12	24								24	30			
3.3	Անվտանգություն և առաջին օգնություն		6տ		36	20	16								24	12			
3.4	Համակարգչային օպերատորության հիմունքներ		5տ		54	14	40								36				
	<b>ԸՆԴԱՄԵՆԸ</b>				<b>162</b>	<b>70</b>	<b>92</b>								<b>120</b>	<b>42</b>			
4.	ԸՆԴՀԱՆՈՒՐ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ																		
4.1	Թեթև արդյունաբերության հիմունքներ		5տ		36	24	12								36				
4.2	Տեքստիլ արդյունաբերության հիմունքներ		5տ		54	30	24								54				
4.3	Մանրաթել և մանվածք		6տ		36	24	12								36				
	<b>ԸՆԴԱՄԵՆԸ</b>				<b>126</b>	<b>78</b>	<b>48</b>								<b>126</b>				
5.	ՀԱՏՈՒԿ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ																		
5.1	Մանահունքի փխրեցում և զգում		5,6տ		54	24	30											54	
5.2	Մանանյութի սանրում		6տ		36	16	20											36	
5.3	Ժապավենաթելի արտադրության տեխնոլոգիա		6տ		54	24	30											54	
5.4	Հաստաթելի (նախաթելի) արտադրության տեխնոլոգիա		6տ		54	24	30											54	
5.5	Նախամանվածքի արտադրություն		6տ		36	16	20											36	
5.6	Մանվածքի արտադրություն		6տ		36	16	20											36	
	<b>ԸՆԴԱՄԵՆԸ</b>				<b>270</b>	<b>120</b>	<b>150</b>												<b>270</b>
6.	ԸՆՏՐՈՎԻ		6տ		54														54
	ՊԱՀՈՒՄՏԱՅԻՆ ԺԱՄԵՐ				30										12	18			
	<b>ԸՆԴԱՄԵՆԸ</b>				<b>972</b>										<b>432</b>	<b>540</b>			
	ԽՈՐՀՐԴԱՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐ				100														
	Շաբաթվա ժամերի քանակը														36	36			

	<b>IV. ՆԱԽԱՍԻՐԱԿԱՆ ԱՌԱՐԿԱՆԵՐ</b>			N	<b>VII. ԱՆՂՐԱԺԵՇՏ ԿԱՔԻՆԵՏՆԵՐԻ, ԼԱԲՈՐԱՏՈՐԻԱՆԵՐԻ ԵՎ ԱՐՇԵՍԱՆՈՑՆԵՐԻ ՑԱՆԿԸ</b>
1	Տնտեսագիտության հիմունքներ				ԿԱՔԻՆԵՏՆԵՐ
2	Վարվելակերպի հիմունքներ			1	Հայոց լեզվի և խոսքի մշակույթի
3				2	Օտար լեզվի
4				3	Հունանիտար առարկաների (պատմության, իրավունքի հիմունքների)
	<b>V. ՊՐԱԿՏԻԿԱ</b>	Կիսամյակ	Շաբաթ	4	Մանրաթելերի, մանանյութի և մանվածքների ու գործվածքների տեսակների
1.	Ուսումնական	5	3	5	Մանածագործական արտադրության մեքենաների և սարքավորումների
2.	Ուսումնական	6	6	6	Նյութագիտության
3.	Վրտադրական	6	3	7	Ընդհանուր հումանիտար և սոցիալ-տնտեսական առարկաների
4					
	ԸՆԴԱՄԵՆԸ		12		ԼԱԲՈՐԱՏՈՐԻԱՆԵՐ
<b>VI. ՈՒՍՈՒՄՆԱՌՈՒԹՅԱՆ ԱՄՓՈՓԻՉ ԱՏԵՍԱԿՈՐՈՒՄ</b> Պետական համալիր քննություն ընդհանուր և հատուկ մասնագիտական մոդուլներից				1	Մանածագործության
				2	Համակարգչային տեխնիկայի
					ԱՐՇԵՍԱՆՈՑՆԵՐ
				1	
					ՄԱՐԶԱԿԱՆ ՀԱՄԱԼԻՐ
				1	Մարզադահլիճ
				2	Մարզահրապարակ

**VIII. ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՊԼԱՆԻ ՊԱՐԶԱԲԱՆՈՒՄՆԵՐ**

1. Ուսանողների գիտելիքների յուրացման մակարդակը ստուգելու, ինչպես նաև ուսումնառության արդյունավետությունը վերահսկելու նպատակով, հաստատության ուսումնամեթոդական խորհրդի որոշմամբ կարող են անցկացվել առանձին առարկաների /մոդուլների/ ընթացիկ /միջանկյալ/ քննություններ, ստուգարքներ, ստուգողական աշխատանքներ: Ստուգարքներն, այդ թվում՝ տարբերակված, անցկացվում են առարկայի /մոդուլի/ համար սահմանված ժամերի հաշվին: Ըստ առարկաների /մոդուլների/ ստուգողական աշխատանքների թիվը հաստատում է ուսումնամեթոդական խորհուրդը: Քննությունների և ստուգարքների անցկացման կարգը սահմանում է ՀՀ կրթության և գիտության նախարարությունը:
2. Լաբորատոր աշխատանքների, օտար լեզուների, համակարգչային, գործնական, սեմինար, ֆիզիկական կուլտուրայի ,ինչպես նաև ուսումնամեթոդական խորհրդի կողմից երաշխավորած առանձին առարկաների /մոդուլների/ զծով ուսումնական պարապմունքների, կուրսային նախագծման և արհեստանոցներում արտադրական ուսուցման ժամանակ ուսումնական խումբը բյուջետային ֆինանսավորման դեպքում կարող է բաժանվել ենթախմբերի՝ յուրաքանչյուրում առավելագույնը 8 ուսանող՝ ելնելով ուսուցանվող առարկայի /մոդուլի/ յուրահատկությունից: Համապատասխան միջոցների առկայության պայմաններում ուսումնական պարապմունքները կարող են անցկացվել առանձին ուսանողների հետ /անհատական պարապմունքներ, ուսուցման անհատական ստեղծագործական ձևեր և այլն/: Ուսումնամեթոդական խորհրդի որոշմամբ առանձին առարկաների /մոդուլների/ տեսական դասընթացը կարող է կազմակերպվել հոսքային պարապմունքի ձևով: Ուսումնամեթոդական խորհրդի որոշումներն ու երաշխավորությունները ուսումնական տարվա սկզբում քննարկում է քոլեջի խորհուրդը, հաստատում՝ տնօրենը:
3. Նախասիրական առարկաները, դրանց ծավալը և ուսուցման ժամկետը, բայց ոչ ավելի, քան շաբաթը 4 ժամ, որոշում է քոլեջը: Ամբիոնների, առարկայական /ցիկլային/ հանձնաժողովների կողմից ներկայացված նախասիրական առարկաների ծրագիրը հաստատում է քոլեջի ուսումնամեթոդական խորհուրդը:
4. Ֆիզիկական կուլտուրայի առարկայական ծրագրով նախատեսված նյութը կարող է իրացվել նաև արտասուսումնական պարապմունքների տարբեր ձևերով՝ մարզական ակումբներում, սեկցիաներում, խմբակներում:
5. Ուսումնական գործընթացի ժամանակացույցը, ելնելով տեղական պայմաններից, կարելի է փոփոխել՝ պարտադիր պահպանելով տեսական և գործնական ուսուցման, մոդուլների ամփոփման, պրակտիկայի, արձակուրդի ընդհանուր տևողությունը:
6. Ամբիոնների, առարկայական /ցիկլային/ հանձնաժողովների ներկայացրած խորհրդատվությունների անցկացման ձևը հաստատում է ուսումնամեթոդական խորհուրդը:
7. Պետական կառավարման լիազորված մարմնի կողմից հանձնարարված փաստաթղթերի ուսումնասիրումը կատարվում է համապատասխան առարկաների ժամերի հաշվին:
8. Պահուստային ժամերը տնօրինում է քոլեջը՝ ուսումնամեթոդական խորհրդի որոշմամբ՝ ՀՀ կրթության և գիտության նախարարության սահմանած կարգի պահանջներին համապատասխան:
9. Ուսումնական պրակտիկան կարող է անցկացվել կենտրոնացված, կամ տեսական պարապմունքների հետ հաջորդաբար՝ պահպանելով պլանով նախատեսված ժամաքանակը: Պրակտիկայի անցկացման ժամկետը կարելի է տեղաշարժել ուսումնական տարվա նույն կիսամյակի ընթացքում: Պրակտիկայի յուրաքանչյուր ձև ավարտվում է հաշվետվությամբ՝ գնահատումով:
10. Նախաավարտական պրակտիկան անց է կացվում կենտրոնացված կարգով, ուսումնական պլանով նախատեսված ժամկետներում:
11. Հաստատությունը, ելնելով անհրաժեշտությունից, կարող է ստեղծել լրացուցիչ կաբինետներ, մասնագիտացված լսարաններ:



ՄՈԴՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ՝

«ԸՆԴՀԱՆՈՒՐ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ  
ՀՍՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ»

ՄՈԴՈՒԼԻ ԴԱՍԻՉԸ՝

ԸԱՀ-3-10-001

ՄՈԴՈՒԼԻ ՏԵԿՆՈԴՈՒԹՅՈՒՆԸ՝

36 ժամ

ԴԱՍԸՆԹԱՑԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ ՁԵՎԸ՝

Տեսական պարապմունք՝ 24 ժամ

Գործնական աշխատանք՝ 12 ժամ

ՄՈՒՏՔԱՅԻՆ ՊԱՀԱՆՁՆԵՐԸ՝

Այս մոդուլը ուսումնասիրելու համար սկզբնական մասնագիտական գիտելիքներ պետք չեն:

ՄՈԴՈՒԼԻ ՆՊԱՏԱԿԸ՝

Այս մոդուլը նախատեսում է սովորողին տալ գիտելիքեր աշխատանքային գործունեության ընթացքում հաջողության հասնելու նախապայմանների մասին, ինչպես նաև ձևավորել ցանկացած բնագավառում անհրաժեշտ աշխատանքային մշակույթ և էթիկա դրսևորելու, ղեկավարի և գործընկերների հետ արդյունավետ հարաբերվելու, առաջացած աշխատանքային խնդիրներն ընկալելու և համապատասխան լուծումներ տալու կարողություններ:

ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ՝

Այս մոդուլը յուրացնելուց հետո ուսանողը պետք է՝

1. կարողանա տիրապետել աշխատանքի տեղավորվելու կարողություններին,
2. կարողանա դրսևորել անհրաժեշտ վերաբերմունք աշխատանքի և աշխատավայրի նկատմամբ,
3. կարողանա տիրապետել վարքագծի և էթիկայի ներքին կանոններին, արդյունավետ աշխատի թիմում,
4. կարողանա սահմանել աշխատանքում հաջողության հասնելու նախապայմանները և պատշաճ հարաբերվի ղեկավարի հետ,
5. կարողանա դրսևորել քննադատական մտածողություն,
6. կարողանա կառավարել սթրեսը և ժամանակը, լուծել պրոբլեմները և կոնֆլիկտները:

ԳՆԱՀԱՏՄԱՆ ԿԱՐԳԸ՝

Մոդուլի ընդունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար նախատեսված կատարման չափանիշների բավարար մակարդակի ապահովումն է:

ԱՐԴՅՈՒՆՔ 1. Տիրապետում է աշխատանքի տեղավորվելու կարողություններին:

ԿԱՏԱՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ՝

1. ճիշտ է շարադրում գործող աշխատանքային օրենսգրքի անհրաժեշտ դրույթները,
2. ճիշտ է ներկայացնում աշխատանքի ընդունվելու և աշխատանքից ազատվելու համար անհրաժեշտ բոլոր գործընթացները,
3. ճիշտ է կազմում գրավոր ինքնակենսագրություն (CV),
4. ճիշտ և մանրամասն բանավոր ներկայացնում է իր կենսագրությունը:

ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻՋՈՑԸ՝

1. Ուսանողին հանձնարարվում է ներկայացնել գործող աշխատանքային օրենսգրքի անհրաժեշտ դրույթները:
2. Ուսանողին հանձնարարվում է ներկայացնել աշխատանքի ընդունվելու և աշխատանքից ազատվելու համար անհրաժեշտ բոլոր գործընթացներն ու դրանց հաջողականությունը:
3. Ուսանողին հանձնարարվում է կազմել գրավոր ինքնակենսագրություն:
4. Ուսանողին հանձնարարվում է մանրամասն բանավոր խոսքով ներկայացնել անձնական կենսագրությունը:  
Արդյունքը կհամարվի ձեռքբերված՝ կատարման բոլոր չափանիշների բավարարման դեպքում:

ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԸ՝

Արդյունքի ուսուցումը կատարվում է դասախոսությունների և գործնական պարապմունքների միջոցով: Կազմակերպվում են իրավիճակային և դերային խաղեր՝ առավելագույնս նմանեցված աշխատանքային իրավիճակին: Ուսուցման ընթացքում բերվում են իրական աշխատանքային փորձի օրինակներ: Ուսանողին կառաջադրվեն որոշարկված հարցեր աշխատանքային օրենսդրության գործող օրենքների, այլ նորմատիվ ակտերի, ձեռնարկություններում ու կազմակերպություններում աշխատանքի ընդունվելու և աշխատանքից ազատվելու գործընթացների ընդհանուր հարցերի վերաբերյալ:

Արդյունքի ձեռքբերումը բավարար է, եթե ուսանողը ցուցաբերում է անհրաժեշտ կարողություն:

**ՈՒՍՈՒՑՄԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԺԱՄԱՔԱՆԱԿԸ՝**

Տեսական պարապմունք՝	4 ժամ
Գործնական աշխատանք՝	2 ժամ

**ԱՐԴՅՈՒՆՔ 2.** Կարողանում է դրսևորել անհրաժեշտ վերաբերմունք աշխատանքի և աշխատավայրի նկատմամբ:

**ԿԱՏԱՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ՝**

- 1.Ճիշտ է ներկայացնում աշխատանքի և շրջապատի նկատմամբ դրական տրամադրվելու կարողություններ,
- 2.Ճիշտ է ներկայացնում գործերը նկերների նկատմամբ հարգալից վերաբերմունքի և արդյունավետորեն հարաբերվելու օրինակներ,
- 3.առաջադրված իրավիճակում ցուցաբերում է պատասխանատվության կարողություններ,
4. ցուցաբերում է գործընկերոջը և ղեկավարին ուշադիր լսելու և հասկանալու կարողություններ:

**ԳՆԱՂԱՏՄԱՆ ՄԻՋՈՑԸ՝**

- 1.Ուսանողին հանձնարարվում է ներկայացնել, ըստ իրավիճակի աշխատանքի և շրջապատի նկատմամբ դրական տրամադրվելու կարողություններ:
- 2.Ուսանողին հանձնարարվում է ներկայացնել հարգալից խոսքի ու վերաբերմունքի դերային գործողություններ:
- 3.Ուսանողին հանձնարարվում է ներկայացնել պատասխանատվության ստանձնման գործողություններ:
- 4.Ուսանողին հանձնարարվում է դրսևորել համոզելու, լսելու և դիմացինին հասկանալու կարողություններ: Արդյունքը կհամարվի ձեռքբերված՝ կատարման բոլոր չափանիշների բավարարման դեպքում:

**ՄԵԹՈՂԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԸ՝**

Արդյունքի ուսուցումը կատարվում է դասախոսությունների և գործնական պարապմունքների միջոցով: Կազմակերպվում են իրավիճակային և դերային խաղեր՝ առավելագույնս նմանեցված աշխատանքային իրավիճակին: Ուսուցման ընթացքում բերվում են պատասխանատվություն ստանձնելու իրական աշխատանքային փորձի օրինակներ: Ուսանողին կառաջադրվեն որոշարկված հարցեր կամ թեստեր՝ աշխատանքային իրավիճակների վերաբերյալ: Արդյունքի ձեռքբերումը բավարար է, եթե ուսանողը ցուցաբերում է անհրաժեշտ կարողություն:

**ՈՒՍՈՒՑՄԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԺԱՄԱՔԱՆԱԿԸ՝**

Տեսական պարապմունք՝	4 ժամ
Գործնական աշխատանք՝	2 ժամ

**ԱՐԴՅՈՒՆՔ 3.** Կարողանում է տիրապետել վարքագծի և էթիկային ներքին կանոններին՝ արդյունավետ աշխատելով թիմում:

**ԿԱՏԱՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ՝**

- 1.Ճիշտ է ներկայացնում կազմակերպության նպատակները, արժեքները և կիրառվող ընդհանուր աշխատանքային մեթոդները, աշխատանքային և միջանձնային հարաբերությունները,
- 2.Ճիշտ է ներկայացնում թիմային աշխատանքի հիմնական սկզբունքները,
3. Ճիշտ է ներկայացնում թիմային խնդիրների լուծման մեթոդները,
4. թիմային աշխատանքի առաջադրված իրավիճակում դրսևորում է անհրաժեշտ վարքագիծ՝ ցուցաբերելով փոխօգնություն, համբերատարություն, նվիրվածություն աշխատանքին և ընկերներին:
5. Ճիշտ վերաբերմունք է դրսևորում և հարգալից է կոնֆլիկտային գործընկերների նկատմամբ.
- 6.առաջարկում է խնդրի ճիշտ լուծումներ՝ առաջադրված պրոբլեմային իրավիճակում:

**ԳՆԱՂԱՏՄԱՆ ՄԻՋՈՑԸ՝**

- 1.Ուսանողին հանձնարարվում է ներկայացնել կազմակերպության նպատակները, արժեքները և կիրառվող աշխատանքային մեթոդները:
- 2.Ուսանողին հանձնարարվում է ներկայացնել թիմային աշխատանքի հիմնական սկզբունքները:
- 3.Ուսանողին հանձնարարվում է ներկայացնել իրավիճակին համապատասխան վարքագիծ:
- 4.Ուսանողին հանձնարարվում է դրսևորել համոզելու, լսելու և դիմացինին հասկանալու կարողություններ: Արդյունքը կհամարվի ձեռքբերված՝ կատարման բոլոր չափանիշների բավարարման դեպքում:

**ՄԵԹՈՂԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԸ՝**

Արդյունքի ուսուցումը կատարվում է դասախոսությունների և գործնական պարապմունքների միջոցով: Կազմակերպվում են իրավիճակային և դերային խաղեր՝ առավելագույնս նմանեցված աշխատանքային իրավիճակին: Ուսուցման ընթացքում բերվում են պատասխանատվություն ստանձնելու իրական աշխատանքային փորձի օրինակներ: Ուսանողին կառաջադրվեն որոշարկված հարցեր կամ թեստեր՝ աշխատանքային իրավիճակների, խոսքի մշակույթի, վարվեցողության նորմերի, հանդուրժողականության



վերաբերյալ, կտրվեն հոգեբանական հարցեր, այլոց բնութագրելու առաջադրանքներ: Կառաջադրվեն նաև սահմանել որոշակի կազմակերպության նպատակներն ու արժեքները:

Արդյունքի ձեռքբերումը բավարար է, եթե ուսանողը ցուցաբերում է անհրաժեշտ կարողություն:

**ՈՒՍՈՒՑՄԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԺԱՄԱՔԱՆԱԿԸ՝**

Տեսական պարապմունք՝	4 ժամ
Գործնական աշխատանք՝	2 ժամ

**ԱՐԴՅՈՒՆՔ 4.** Կարողանում է դրսևորել աշխատանքում հաջողության հասնելու նախապայմանները և պատշաճ հարաբերվել ղեկավարի հետ:

**ԿԱՏԱՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ՝**

- 1.Ճիշտ է բացատրում աշխատանքային կարգապահության և ճշտապահության կարևորությունը,
- 2.Ճիշտ է ներկայացնում ղեկավարի հետ հարաբերվելու ձևերը, իր և ղեկավարի իրավունքներն ու պարտականությունները,
- 3.Ճիշտ է ներկայացնում աշխատանքի արդյունավետության ու որակի ապահովման ընդհանուր սկզբունքները:

**ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻՋՈՑԸ՝**

- 1.Ուսանողին հանձնարարվում է ներկայացնել աշխատանքի կարգապահության և ճշտապահության կարևորությունը, կազմակերպության նպատակները, արժեքները և կիրառվող աշխատանքային մեթոդները:
- 2.Ուսանողին հանձնարարվում է ներկայացնել թիմային աշխատանքի հիմնական սկզբունքները:
- 3.Ուսանողին հանձնարարվում է ներկայացնել իրավիճակին համապատասխան վարքագիծ:
- 4.Ուսանողին հանձնարարվում է դրսևորել համոզելու, լսելու և դիմացինին հասկանալու կարողություններ: Արդյունքը կհամարվի ձեռքբերված՝ կատարման բոլոր չափանիշների բավարարման դեպքում:

**ՄԵԹՈՂԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԸ՝**

Արդյունքի ուսուցումը կատարվում է դասախոսությունների և գործնական պարապմունքների միջոցով: Կազմակերպվում են իրավիճակային և դերային խաղեր՝ առավելագույնս նմանեցված աշխատանքային իրավիճակին: Ուսուցման ընթացքում հանձնարարվում են աշխատանքի կարգապահության նորմերի պահպանման իրավիճակային օրինակներ, բերվում են թիմային աշխատանքում ինքնադրսևորման և պատասխանատվություն ստանձնելու իրական աշխատանքային փորձի օրինակներ: Ուսանողին կառաջադրվեն որոշարկված հարցեր կամ թեստեր՝ աշխատանքային իրավիճակների, խոսքի մշակույթի, վարվեցողության նորմերի, հանդուրժողականության, վարքագծի ինքնատիրապետման ու ինքնակառավարման վերաբերյալ, կտրվեն հոգեբանական հարցեր, այլոց բնութագրելու և հասկանալու առաջադրանքներ:

Արդյունքի ձեռքբերումը բավարար է, եթե ուսանողը ցուցաբերում է անհրաժեշտ կարողություն:

**ՈՒՍՈՒՑՄԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԺԱՄԱՔԱՆԱԿԸ՝**

Տեսական պարապմունք՝	4 ժամ
Գործնական աշխատանք՝	2 ժամ

**ԱՐԴՅՈՒՆՔ 5.** Կարողանում է դրսևորել քննադատական մտածողություն:

**ԿԱՏԱՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ՝**

- 1.Ճիշտ է գնահատում տեղեկատվության հուսալիության և զգացմունքայնության աստիճանը,
- 2.ստացած տեղեկատվությունը ճիշտ և արդյունավետորեն համադրում է առկա գիտելիքների հետ,
- 3.իրականացնում է կառուցողական քննադատություն՝ ճիշտ բացատրելով դրա կարևորությունը:

**ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻՋՈՑԸ՝**

- 1.Ուսանողին հանձնարարվում է գնահատել տեղեկատվության հուսալիությունը:
- 2.Ուսանողին հանձնարարվում է տրամադրված տեղեկատվությունը համադրել առկա գիտելիքների հետ:
- 3.Ուսանողին հանձնարարվում է որոշակի հարցի շուրջ ներկայացնել կառուցողական քննադատություն: Արդյունքը կհամարվի ձեռքբերված՝ կատարման բոլոր չափանիշների բավարարման դեպքում:

**ՄԵԹՈՂԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԸ՝**

Արդյունքի ուսուցումը կատարվում է դասախոսությունների և գործնական պարապմունքների միջոցով: Կազմակերպվում են իրավիճակային և դերային խաղեր: Ուսուցման ընթացքում հանձնարարվում է տարաբնույթ տեղեկատվություն՝ աշխատանքի կարգապահության նորմերի, թիմային աշխատանքում յուրաքանչյուրի ինքնադրսևորման և պատասխանատվություն ստանձնելու իրական աշխատանքային օրինակների վերաբերյալ: Ուսանողին կառաջադրվեն որոշարկված հարցեր, թեստեր կամ

տեղեկատվություն՝ վերջիններիս հավաստիության ստուգաբանման նպատակով: Կտրվեն հոգեբանական հարցեր, տարաբնույթ խնդիրներ բնութագրելու, իրավիճակները քննադատելու առաջադրանքներ: Արդյունքի ձեռքբերումը բավարար է, եթե ուսանողը ցուցաբերում է անհրաժեշտ կարողություն:

**ՈՒՍՈՒՑՄԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԺԱՄԱՔԱՆԱԿԸ՝**

Տեսական պարապմունք՝ 4 ժամ  
Գործնական աշխատանք՝ 2 ժամ

**ԱՐԴՅՈՒՆՔ 6.** Կարողանում է կառավարել սթրեսը և ժամանակը, լուծել պրոբլեմներն ու կոնֆլիկտները:

**ԿԱՏԱՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ՝**

1. Ճիշտ է ներկայացնում սթրեսի կանխարգելման և անխուսափելի սթրեսին դիմակայելու մեթոդները,
2. Ճիշտ է կազմում իր աշխատաքնային պլանը (պայմանական աշխատանքային պլան),
3. Ճիշտ է ներկայացնում ժամանակի արդյունավետ օգտագործման միջոցները,
4. Ճիշտ է բացահայտում և սահմանում տրված իրավիճակում եղած պրոբլեմը,
5. Ճիշտ է վերլուծում պրոբլեմը, տալիս է լուծման ճիշտ տարբերակ և գնահատում արդյունքը,
6. Ճիշտ է բացահայտում ցանկացած կոնֆլիկտի պատճառները,
7. Ճիշտ է ներկայացնում կոնֆլիկտի կանխարգելման եղանակները և կարողանում է տալ դրանց արագ ու արդյունավետ լուծումներ:

**ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻՋՈՑԸ՝**

1. Ուսանողին հանձնարարվում է բացատրել սթրեսի էությունը և դրա կանխարգելման մեթոդները:
2. Ուսանողին հանձնարարվում է կազմել աշխատանքային պլան:
3. Ուսանողին հանձնարարվում է ներկայացնել ժամանակի արդյունավետ օգտագործման միջոցները:
4. Ուսանողին հանձնարարվում է բացահայտել պրոբլեմը՝ առաջադրելով լուծման ճիշտ և արդյունավետ տարբերակ:
5. Ուսանողին հանձնարարվում է բացահայտել ներկայացված կոնֆլիկտի պատճառները:  
Արդյունքը կհամարվի ձեռքբերված՝ կատարման բոլոր չափանիշների բավարարման դեպքում:

**ՄԵԹՈՂԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԸ՝**

Արդյունքի ուսուցումը կատարվում է դասախոսությունների և գործնական պարապմունքների միջոցով: Կազմակերպվում են իրավիճակային և դերային խաղեր: Ուսուցման ընթացքում ներկայացվում են տարաբնույթ հոգեբանական իրավիճակներում ստեղծված սթրեսը հաղթահարելու հնարավոր միջոցները: Ուսանողին կառաջադրվեն որոշարկված հարցեր, թեստեր կամ աշխատանքային պլան կազմելու առաջադրանքներ: Կտրվեն հոգեբանական հարցեր, տարաբնույթ կոնֆլիկտային իրավիճակները բնութագրելու, քննադատելու և լուծելու առաջադրանքներ:

Արդյունքի ձեռքբերումը բավարար է, եթե ուսանողը ցուցաբերում է անհրաժեշտ կարողություն:

**ՈՒՍՈՒՑՄԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԺԱՄԱՔԱՆԱԿԸ՝**

Տեսական պարապմունք՝ 4 ժամ  
Գործնական աշխատանք՝ 2 ժամ

**ՍՈՂՈՒՄԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ՝**

**ՍՈՂՈՒՄԻ ԴԱՍԻՉԸ՝**

**ՍՈՂՈՒՄԻ ՏԵՎՈՂՈՒԹՅՈՒՆԸ՝**

**ԴԱՍԸՆԹԱՑԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ ՉԵՎԸ՝**

**«ՀԱՂՈՐԴԱԿՑՈՒԹՅՈՒՆ»**

**ԱՀԴ 3 – 10 - 001**

**36 ժամ**

**Տեսական պարապմունք՝ 12 ժամ**

**Գործնական աշխատանք՝ 24 ժամ**

**ՄՈՒՏՔԱՅԻՆ ՊԱՅԱՆՋՆԵՐԸ՝**

Այս մոդուլն ուսումնասիրելու համար սկզբնական մասնագիտական գիտելիքներ պետք չեն:

**ՍՈՂՈՒՄԻ ՆՊԱՏԱԿԸ՝**

Այս մոդուլը նախատեսված է այն ուսանողների համար, ովքեր կարիք ունեն զարգացնել և ամրապնդել հաղորդակցվելու իրենց ունակությունները: Սողուլը կարելի է ուսուցանել ինչպես մասնագիտական ուսումնառությանը զուգընթաց, այնպես էլ առանձին, քանի որ այն պարունակում է նաև ընդհանուր կրթության և անձի զարգացման համար կարևոր տարրեր: Դա նշանակում է, որ դասավանդողները պետք է խրախուսեն և կիրառեն ուսանողների ինքնաբացահայտման հնարավորությունների տարբեր

մոտեցումներ, ինչպես օրինակ. դերային խաղերը, տեսանյութերը, մամուլի ուսումնասիրությունը և այլն: Ավարտելով այս մոդուլը՝ ուսանողը կգարգացնի հաղորդակցության մի շարք կարևոր ունակություններ, ձեռք կբերի ինքնավստահություն, կկարողանա արդյունավետ և ակտիվ կերպով հաղորդակցվել ոչ միայն աշխատանքային ու մասնագիտական գործունեության ընթացքում, այլև՝ անձնական կյանքում, ուղղորդել և ղեկավարել այլոց աշխատանքը:

**ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ՝** Այս մոդուլը յուրացնելուց հետո ուսանողը պետք է՝

1. կարողանա սահմանել ուսումնառության անձնական նպատակները և իմանա դրանց սահմանները,
2. կարողանա իրականացնել պարզ թեմաների և տեքստերի մասին բանավոր/գրավոր տեղեկատվական հաղորդումներ,
3. կարողանա նախաձեռնել, պահպանել, վարել, եզրափակել երկխոսություններ և քննարկումներ,
4. կարողանա մեկնաբանել սխեմաներ, աղյուսակներ, գծապատկերներ, քարտեզներ և նկարներ,
5. կարողանա կատարել փաստաթղթավորում:

**ԳՆԱՀԱՏՄԱՆ ԿԱՐԳԸ՝**

Մոդուլի ընդունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար նախատեսված կատարման չափանիշների բավարար մակարդակի ապահովումն է:

**ԱՐԴՅՈՒՆՔ 1.** Կարողանում է սահմանել ուսումնառության անձնական նպատակները և գիտի դրանց սահմանները:

**ԿԱՏԱՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ՝**

1. ճիշտ է սահմանում ուսումնառության անձնական նպատակները,
2. ճիշտ է բացահայտում ուսումնառության անձնական նպատակների սահմանները,
3. ճիշտ է պլանավորում և կիրառում ուսումնառության անձնական նպատակների ձեռքբերմանն ուղղված ուսումնառության գործընթացները,
4. ճիշտ է ներկայացնում ուսումնառության տարբեր եղանակների սահմանումները:

**ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻՋՈՑԸ՝**

Ուսանողին կհանձնարարվի ներկայացնել հակիրճ զեկույց, որի սահմաններում նա կարտահայտի իր պատկերացումներն անձնական ուսումնառության նպատակների, դրանց սահմանների և գործընթացների, ինչպես նաև ուսումնառության տարբեր ձևերի ու եղանակների մասին: Ուսանողի գրավոր խոսքը պետք է պարունակի առավելագույնը 50 բառ: Կտրվեն մի շարք թեստային և հոգեբանական հարցեր:

Արդյունքը կհամարվի ձեռքբերված՝ սահմանված կատարման բոլոր չափանիշները բավարար իրականացնելու դեպքում:

**ՄԵԹՈՂԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԸ՝**

Արդյունքի ուսուցումը կատարվում է դասախոսությունների և գործնական պարապմունքների միջոցով: Հաղորդակցության մոդուլի գործնական ծրագրերը պետք է կազմված լինեն այնպես, որ մի շարք առաջադրանքների միջոցով կիրառվեն հաղորդակցության նպատակային և բազմազան գործածության փոխկապակցված հմտություններ: Այդ առաջադրանքները պետք է արտահայտեն ուսանողների մասնագիտական հետաքրքրությունը կամ լինեն ավելի ընդհանրական բնույթի: Խորհուրդ է տրվում, որպեսզի առաջադրանքները քննարկվեն և պլանավորվեն այնպես, որ գնահատման ենթակա արդյունքը ստեղծվի ընթացիկ աշխատանքներին զուգընթաց, այլ ոչ թե առանձին վարժության շրջանակում: Հաղորդակցության մոդուլի մեջ ուսումնառությունը և դասավանդումը պետք է լինեն ակտիվ և ուսանողակենտրոն: Ուսուցման ընթացքում պետք է բերվեն իրական աշխատանքային փորձի օրինակներ:

**ՌԻՍՈՒՑՄԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԺԱՄԱՔԱՆԱԿԸ՝**

Տեսական պարապմունք՝	2 ժամ
Գործնական աշխատանք՝	6 ժամ

**ԱՐԴՅՈՒՆՔ 2.** Կարողանում է իրականացնել պարզ թեմաների և տեքստերի մասին բանավոր/գրավոր տեղեկատվական հաղորդումներ:

**ԿԱՏԱՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ՝**

1. օգտագործում է բանավոր և գրավոր խոսքի ճիշտ կառուցվածք,
2. ներկայացրած հաղորդումը պարունակում է պարզ տեղեկատվություն, կարծիքներ և գաղափարներ,
3. կատարում է տեղեկատվության նպատակային առանձնացում և խմբավորում,
4. հաղորդումն իրականացնում է՝ ըստ իրավիճակի և լսարանի:

**ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻՋՈՑԸ՝**

Ուսանողին կհանձնարարվի բանավոր և գրավոր տեղեկատվական հաղորդում պատրաստել պարզ թեմաների ու տեքստերի մասին: Կտրվեն մի շարք թեստային և հոգեբանական հարցեր, ինչպես նաև կառաջադրվեն տեղեկատվության նպատակային խնդիրներ՝ բանավոր ու գրավոր խոսքի համապատասխան կառուցվածք ստուգելու նպատակով: Մասնավորապես, կհանձնարարվի որևէ պարզ թեմա և/կամ ոչ գեղարվեստական տեքստ, համաձայն որի ուսանողը պետք է կազմի մեկ կամ մի քանի մասից բաղկացած գրավոր հաղորդում՝ կատարելով համապատասխան բանավոր ներկայացում: Գրավոր խոսքը պետք է լինի հակիրճ, պարունակի առավելագույնը 50 բառ, իսկ բանավոր ներկայացումը պետք է տևի մեկ-երկու րոպե: Լրացուցիչ ժամանակ պետք է տրամադրվի նաև հարցերի համար: Ուսանողը պետք է իր կարծիքն արտահայտի ուրիշների կողմից հնչեցված տեսակետների կամ հարցերի վերաբերյալ: Անհրաժեշտ է կազմել համատեքստերի կամ օգտագործված աղբյուրների բնութագիր, ինչը կարող է ունենալ ստուգման թերթիկի կամ արձանագրության տեսք: Կատարման բոլոր չափանիշները պետք է ձեռք բերվեն գրավոր և բանավոր խոսքի ընթացքում միաժամանակ:

Արդյունքը կհամարվի ձեռքբերված՝ կատարման բոլոր չափանիշների բավարարման դեպքում:

**ՄԵԹՈՂԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՈՒՍՈՒՐՍՆԵՐԸ՝**

Արդյունքի ուսուցումը կատարվում է դասախոսությունների և գործնական պարապմունքների միջոցով: Կազմակերպվում են իրավիճակային և դերային խաղեր՝ առավելագույնս նմանացված աշխատանքային իրավիճակին: Ուսուցման ընթացքում բերվում են իրական աշխատանքային փորձի օրինակներ:

**ՈՒՍՈՒՑՄԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԺԱՄԱՔԱՆԱԿԸ՝**

Տեսական պարապմունք՝	2 ժամ
Գործնական աշխատանք՝	4 ժամ

**ԱՐԴՅՈՒՆՔ 3.** Կարողանում է նախաձեռնել, պահպանել, վարել, եզրափակել երկխոսություններ և քննարկումներ:

**ԿԱՏԱՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ՝**

- 1.Ճիշտ է կիրառում «ակտիվ ունկնդրման» ժամանակ օգտագործվող հմտությունները.
  - ա. պարզաբանումներ ստանալու ձգտումը,
  - բ. գրառումներ կատարելը,
  - գ. ամփոփելը,
- 2.ազատ կերպով ձևակերպում, արտահատում և պաշտպանում է իր գաղափարները, մտտեցումները, տեսակետներն ու կարծիքները,
3. ցուցաբերում է հանդգելու և ներգրավելու կարողություն,
4. կատարում է ճիշտ ամփոփում և եզրափակում:

**ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻՋՈՑԸ՝**

Ուսանողին կներկայացվի որոշակի տեքստ, որը նկարագրում է որևէ ոչ միանշանակ իրավիճակ, խնդիր և/կամ գաղափար: Ուսանողը կընդգրկվի երկու և/կամ ավելի հոգուց կազմված խմբում, որի անդամներից մեկը կարող է հանդես գալ դասավանդողի դերում: Քննարկման համար տրվող առավելագույն ժամանակը 3 րոպե է (յուրաքանչյուր մասնակցի համար): Ուսանողը պետք է ամենաանհրաժեշտ տեղեկություն տա տեքստում առկա հարցերի մասին և խմբի անդամներին ներկայացնի իր տեսակետներն ու նկատառումները: Այն կարող է լինել մեկ տեսակի տեղեկատվություն և/կամ փաստացի նկարագրություն:

Գնահատման ժամանակ պետք է առանձնահատուկ ուշադրություն դարձվի ուսանողի կողմից դիմացինի տեսակետը լսելու և դրանից հետևություններ անելու հմտությանը: Անհրաժեշտ է կազմել համատեքստի կամ օգտագործված աղբյուրի բնութագիր, որը կարող է ունենալ ստուգման թերթիկի կամ արձանագրության տեսք: Քննարկումն ըստ դասավանդողի հայեցողության կարող է փոխարինվել տրված թեմայով հարցազրույցի: Բոլոր կատարման չափանիշներն էլ պետք է ձեռք բերվեն մեկ առաջադրանքի շրջանակում:

Արդյունքը կհամարվի ձեռքբերված՝ կատարման բոլոր չափանիշների բավարարման դեպքում:

**ՄԵԹՈՂԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՈՒՍՈՒՐՍՆԵՐԸ՝**

Արդյունքի ուսուցումը կատարվում է դասախոսությունների և գործնական պարապմունքների միջոցով: Կազմակերպվում են իրավիճակային և դերային խաղեր՝ առավելագույնս նմանացված աշխատանքային իրավիճակին: Ուսուցման ընթացքում բերվում են իրական աշխատանքային փորձի օրինակներ:

**ՈՒՍՈՒՑՄԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԺԱՄԱՔԱՆԱԿԸ՝**

Տեսական պարապմունք՝  
Գործնական աշխատանք՝

4 ժամ  
6 ժամ

**ԱՐԴՅՈՒՆՔ 4.** Կարողանում է մեկնաբանել սխեմաներ, աղյուսակներ, գծապատկերներ, քարտեզներ և նկարներ:

**ԿԱՏԱՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ՝**

1. ճիշտ է նախանշում սխեմաների, աղյուսակների, գծապատկերների, քարտեզների և նկարների նշանակությունն ու դրանց միջև եղած տարբերությունները,
2. ճիշտ է մեկնաբանում առաջադրված սխեմաները, աղյուսակները, դիագրամները, քարտեզները և նկարները,
3. մեկնաբանման ընթացքում օգտագործում է խոսքի համապատասխան կառուցվածք:

**ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻՋՈՑԸ՝**

Ուսանողին կհանձնարարվի մեկնաբանել մեկական սխեմա, աղյուսակ, գծապատկեր, քարտեզ և նկար՝ դրանց մասին բանավոր հաղորդում կատարելուն վերաբերող ուսանողի հմտությունները ստուգելու նպատակով: Յուրաքանչյուր ներկայացում պետք է տևի միջինը 1 րոպե: Լրացուցիչ ժամանակ կտրամադրվի նաև հարցերի համար: Ուսանողը պետք է իր կարծիքն արտահայտի ուրիշների կողմից հնչեցված տեսակետի կամ հարցերի վերաբերյալ: Անհրաժեշտ է կազմել համատեքստի բնութագիր, որը կարող է ունենալ ստուգման թերթիկի կամ արձանագրության տեսք:

Արդյունքը կհամարվի ձեռքբերված՝ կատարման բոլոր չափանիշների բավարարման դեպքում:

**ՄԵԹՈՂԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԸ՝**

Արդյունքի ուսուցումը կատարվում է դասախոսությունների և գործնական պարապմունքների, սխեմաների, աղյուսակների, գծանկարների, քարտեզների և նկարների միջոցով: Կիրառվում են ձևաթղթեր, ձևաչափեր, դիտակտիկ այլ նյութեր:

**ՌԻՍՈՒՑՄԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԺԱՄԱՔԱՆԱԿԸ՝**

Տեսական պարապմունք՝ 2 ժամ  
Գործնական աշխատանք՝ 4 ժամ

**ԱՐԴՅՈՒՆՔ 5.** Կարողանում է կատարել փաստաթղթավորում:

**ԿԱՏԱՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ՝**

1. ճիշտ է սահմանում տարբեր փաստաթղթերն՝ ըստ դրանց նշանակության,
2. ճիշտ է նախանշում տարբեր փաստաթղթերի օգտագործման տեղն ու դերը,
3. ճիշտ է կատարում տարբեր տեսակի տեղեկատվությունների փաստաթղթավորում:

**ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻՋՈՑԸ՝**

Ուսանողին կհանձնարարվեն կազմել տարբեր տեսակի փաստաթղթեր, ինչպիսիք են.

- ա/ դիմում,
- բ/ ինքնակենսագրություն (տրված տարբեր տեսակի ձևաչափերով),
- գ/ պաշտոնական և ոչ պաշտոնական նամակներ,
- դ/ արձանագրություն,
- ե/ երաշխավորագիր,
- զ/ վավերագիր և այլն:

Արդյունքը համարվում է ձեռքբերված՝ կատարման բոլոր չափանիշների բավարարման դեպքում:

**ՄԵԹՈՂԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԸ՝**

Արդյունքի ուսուցումը կատարվում է դասախոսությունների և գործնական պարապմունքների, տարատեսակ փաստաթղթերի օգտագործման, տարբեր տեսակի տեղեկատվությունների փաստաթղթավորման միջոցով: Կիրառվում են ձևաթղթեր, ձևաչափեր և դիտակտիկ այլ նյութեր:

**ՌԻՍՈՒՑՄԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԺԱՄԱՔԱՆԱԿԸ՝**

Տեսական պարապմունք՝ 2 ժամ  
Գործնական աշխատանք՝ 4 ժամ

ՄՈՂՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ՝  
ՄՈՂՈՒԼԻ ԴԱՍԻՉԸ՝  
ՄՈՂՈՒԼԻ ՏԵՎՈՂՈՒԹՅՈՒՆԸ՝  
ԴԱՍԸՆԹԱՑԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ ՁԵՎԸ՝

«ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԱՌԱՋԻՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ»  
ԱԱՕ 3 – 10 - 001  
36 ժամ  
Տեսական պարապմունք՝ 20 ժամ  
Գործնական աշխատանք՝ 16 ժամ

**ՄՈՒՏՔԱՅԻՆ ՊԱՅԱՆՋՆԵՐԸ՝**

Այս մոդուլն ուսումնասիրելու համար սկզբնական մասնագիտական գիտելիքներ պետք չեն:

**ՄՈՂՈՒԼԻ ՆՊԱՏԱԿԸ՝**

Այս մոդուլը մշակվել է արտադրական կազմակերպություններում և արտադրամասերում աշխատանքի անվտանգության վերաբերյալ ուսանողների մոտ գիտելիքներ, աշխատանքի պաշտպանության միջոցառումների իրականացման և առաջին օգնության կազմակերպման հմտություններ ձևավորելու նպատակով: Այն անհրաժեշտ է արտադրական ձեռնարկության / արտադրամասի բոլոր մակարդակների աշխատողներին:

**ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ՝**

Այս մոդուլը յուրացնելուց հետո ուսանողը պետք է՝

1. կարողանա ներկայացնել աշխատանքի պաշտպանության իրավական և կազմակերպչական դրույթները,
2. կարողանա շարադրել անվտանգության տեխնիկայի նորմերը և կանոնները կազմակերպություններում,
3. կարողանա հստակ ներկայացնել արտադրական սանիտարիայի և հիգիենայի վերաբերյալ պահանջները,
4. կարողանա կազմակերպել առաջին բուժօգնություն և ներկայացնել անհրաժեշտ միջոցները:

**ԳՆԱՂԱՏՄԱՆ ԿԱՐԳԸ՝**

Մոդուլի ընդունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար նախատեսված կատարման չափանիշների բավարար մակարդակի ապահովումն է:

**ԱՐԴՅՈՒՆՔ 1.** Կարողանում է ներկայացնել աշխատանքի պաշտպանության իրավական և կազմակերպչական դրույթները:

**ԿԱՏԱՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ՝**

1. ճիշտ է ներկայացնում աշխատանքի պաշտպանության վերաբերյալ իրավական ակտերը և օրենքները,
2. ճիշտ է ներկայացնում կազմակերպություններում աշխատանքի պաշտպանության կազմակերպման ներքին նորմատիվային փաստաթղթերը,
3. ճիշտ է ներկայացնում աշխատանքի պաշտպանության նորմերի և կանոնների խախտման հետ կապված պատասխանատվությունը,
4. ճիշտ է ներկայացնում աշխատանքի պաշտպանության նորմերի և կանոնների պահպանման նկատմամբ վերահսկողության ձևերն ու մեխանիզմները,
5. ճիշտ է ներկայացնում արտադրությունում դժբախտ դեպքերի և պատահարների հետաքննության, փաստաթղթավորման ու հաշվառման կարգը,
6. ճիշտ է ներկայացնում արտադրության տարբեր մակարդակների ղեկավարների պատասխանատվությունն աշխատանքի պաշտպանության նորմերի պահպանման վերաբերյալ:

**ԳՆԱՂԱՏՄԱՆ ՄԻՋՈՑԸ՝**

Ուսանողին կառաջադրվեն որոշարկված հարցեր աշխատանքի պաշտպանության բնագավառում գործող օրենքների, այլ նորմատիվ ակտերի, ձեռնարկություններում ու կազմակերպություններում աշխատանքի պաշտպանության կազմակերպման ընդհանուր հարցերի վերաբերյալ:

Արդյունքի ձեռքբերումը բավարար է, եթե ուսանողը ցուցաբերում է անհրաժեշտ կարողություն:

**ՄԵԹՈՂԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՈՒՍՈՒՐՍՆԵՐԸ՝**

Արդյունքի ուսուցումը կատարվելու է տեսական պարապմունքների միջոցով: Անհրաժեշտ է ունենալ աշխատանքի պաշտպանության բնագավառի օրենքներ, այլ նորմատիվ ակտեր, ուսումնական գրականություն, հրահանգներ, լրացվող փաստաթղթերի նմուշներ:

**ՈՒՍՈՒՑՄԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԺԱՄԱՔԱՆԱԿԸ՝**

Տեսական պարապմունք՝ 6 ժամ  
Գործնական աշխատանք՝ 0 ժամ

**ԱՐԴՅՈՒՆՔ 2.** Կարողանում է շարադրել անվտանգության տեխնիկայի նորմերը և կանոնները կազմակերպություններում:

**ԿԱՏԱՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ`**

- 1.Ճիշտ է ներկայացնում տեխնոլոգիական սարքավորումների, մեխանիզմների և փոխադրամիջոցների շահագործման անվտանգության տեխնիկայի հիմնական պահանջները,
- 2.Ճիշտ է ներկայացնում էլեկտրամատակարարության կանոնները և պաշտպանությունը,
- 3.Ճիշտ է ներկայացնում հրդեհաանվտանգության կանոնները և պաշտպանությունը,
- 4.Ճիշտ է ներկայացնում ճնշման տակ աշխատող սարքավորումների և մեխանիզմների անվտանգ շահագործման կանոնները:

**ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻՋՈՑԸ`**

Ուսանողին կտրվի թեսթ` ոչ պակաս 10 հարցով, յուրաքանչյուր հարցի վերաբերյալ առնվազն 3 պատասխանով, որոնցից ճիշտ է մեկը: Ուսանողը պետք է նշի, թե յուրաքանչյուր կոնկրետ հարցում որն է ճիշտ պատասխանը:

Արդյունքի ձեռքբերումը կհամարվի բավարար, եթե թեսթի հարցերին տրվեն անսխալ պատասխաններ:

**ՄԵԹՈՂԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԸ`**

Արդյունքի ուսուցումը կատարվելու է տեսական պարապմունքների և գործնական աշխատանքների միջոցով: Ուսուցման համար անհրաժեշտ է ունենալ ուսումնական գրականություն, անվտանգության կանոնների հրահանգներ, անվտանգության նպատակներով օգտագործվող միջոցներ և այլն:

**ՌԻՍԻՑՄԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԺԱՄԱՔԱՆԱԿԸ`**

Տեսական պարապմունք`	6 ժամ
Գործնական աշխատանք`	6 ժամ

**ԱՐԴՅՈՒՆՔ 3.** Կարողանում է հստակ ներկայացնել արտադրական սանիտարիայի և հիգիենայի վերաբերյալ պահանջները:

**ԿԱՏԱՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ`**

- 1.Ճիշտ է ներկայացնում արտադրական սանիտարիայի և հիգիենայի հասկացությունները,
- 2.Ճիշտ է ներկայացնում արտադրական միկրոկլիմայի վերաբերյալ նորմատիվային պահանջները,
- 3.Ճիշտ է թվարկում արտադրական աղմուկից և ցնցումներից պաշտպանվելու միջոցները,
- 4.Ճիշտ է ներկայացնում արտադրական լուսավորվածությանը ներկայացվող պահանջները և նորմերը:

**ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻՋՈՑԸ`**

Ուսանողին կտրվեն կոնկրետ հարցեր և անհրաժեշտ գրականություն: Օգտվելով գրականությունից, ուսանողը պետք է կարողանա գտնել հարցերի ճիշտ պատասխանները, իսկ ըստ իրավիճակների` նաև նորմաները: Բացի դրանից ուսանողը պետք է բավարար գրագիտություն ցուցաբերի այս կամ այն խախտման վնասակար և վտանգավոր հետևանքների վերաբերյալ:

Ստորև բերվում են արտադրական միկրոկլիմայի բաղադրիչները.

- ա. արտադրական միկրոկլիմայի բաղադրիչներ`
  - ջերմաստիճանը
  - հարաբերական խոնավությունը
  - փոշու առկայությունը
- բ. սանիտարահիգիենիկ պայմանների բաղադրիչներ`
  - օդափոխություն
  - ջեռուցում
  - ջրամատակարարում, ջրահեռացում և այլն:

Արդյունքի ձեռքբերումը համարվում է բավարար, եթե ընդհանուր առմամբ տրվում են ճիշտ պատասխաններ` աննշան թերություններով:

**ՄԵԹՈՂԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԸ`**

Արդյունքի ուսուցումը կատարվելու է տեսական պարապմունքների և գործնական աշխատանքների միջոցով: Ուսումնական գործընթացում անհրաժեշտ է օգտագործել ուսումնական և նորմատիվային տեղեկատվական գրականություն, գործիքներ ու սարքավորումներ: Նպատակահարմար է գործնական պարապմունքներն անցկացնել արտադրամասում:

**ՌԻՍԻՑՄԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԺԱՄԱՔԱՆԱԿԸ`**

Տեսական պարապմունք`	6 ժամ
---------------------	-------

**ԱՐԴՅՈՒՆՔ 4.** Կարողանում է կազմակերպել առաջին բուժօգնություն և ներկայացնել դրա համար անհրաժեշտ միջոցները:

**ԿԱՏԱՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ`**

- 1.Ճիշտ է ցուցադրում արհեստական շնչառության իրականացումը,
- 2.Ճիշտ է ցուցադրում արտի աշխատանքի վերականգնման իրականացումը,
- 3.Ճիշտ է ցուցադրում է արնահոսության դադարեցման իրականացումը` ճիշտ դնելով վիրակապ,
- 4.Ճիշտ է վիրակապում կոտրվածքները,
- 5.Ճիշտ է ցուցաբերում առաջին օգնության իրականացումը` այրվածքների դեպքում,
- 6.Ճիշտ է ցուցաբերում առաջին օգնության իրականացումը` հոսանքահարման դեպքում:

**ԳՆԱՂԱՏՄԱՆ ՄԻՋՈՑԸ`**

Ուսանողը կոնկրետ գործողությունով պետք է ցույց տա մի քանի իրավիճակներում առաջին բուժօգնություն ցուցաբերելու կարգը:

Արդյունքի ձեռքբերումը կհամարվի բավարար, եթե ցուցաբերվի ճիշտ առաջին բուժօգնություն:

**ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԸ`**

Արդյունքի ուսուցումը կատարվելու է տեսական պարապմունքների և գործնական աշխատանքների միջոցով: Ուսուցման համար անհրաժեշտ է ունենալ առաջին օգնությանը վերաբերող գրականություն, տեսաֆիլմեր, պլակատներ, առաջին օգնության միջոցներ և այլն:

**ՌԻՍՈՒՑՄԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԺԱՄԱՔԱՆԱԿԸ`**

Տեսական պարապմունք`	2 ժամ
Գործնական աշխատանք`	6 ժամ

**ՍՈՂՈՒՄԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ`**

**«ՀԱՄԱԿԱՐԳՉԱՅԻՆ ՕՊԵՐԱՏՈՐՈՒԹՅԱՆ ՀԻՄՈՒՆՔՆԵՐ »**

**ՍՈՂՈՒՄԻ ԴԱՍԻՉԸ`**

**ՀՕՊՀ 4 – 10 - 001**

**ՍՈՂՈՒՄԻ ՏԵՎՈՂՈՒԹՅՈՒՆԸ`**

**54 ժամ**

**ԴԱՍԸՆԹԱՑԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ ՉԵՎԸ`**

Տեսական պարապմունք`	14 ժամ
Գործնական աշխատանք`	40 ժամ

**ՍՈՒՏՔԱՅԻՆ ՊԱՂԱՆՋՆԵՐԸ`**

Այս մոդուլը ուսումնասիրելու համար սկզբնական մասնագիտական գիտելիքներ պետք չեն:

**ՍՈՂՈՒՄԻ ՆՊԱՏԱԿԸ`**

Այս մոդուլը նախատեսում է ծանոթացնել համակարգչի կառուցվածքին և Windows օպերացիոն համակարգին, տալ տարրական գիտելիքներ Microsoft Office փաթեթի WORD տեքստային խմբագրի և ծրագրի մասին, ուսանողի մոտ զարգացնել տեքստային փաստաթղթերի պատրաստման, խմբագրման, դրանց ֆորմատավորման ու ձևավորման, փաստաթղթերի պահպանման, տպագրման, հաշվարկային փաստաթղթեր ստեղծելու, խմբագրելու, ինչպես նաև ինտերնետ ցանցում աշխատելու տարրական հմտություններ:

**ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ`**

Այս մոդուլը յուրացնելուց հետո ուսանողը պետք է`

- 1.կարողանա ներկայացնել համակարգչի կառուցվածքը և տիրապետի Windows օպերացիոն համակարգին ու WORD ծրագրին,
- 2.կարողանա կատարել տեքստային և հաշվարկային փաստաթղթերի մուտքագրման, խմբագրման, ֆորմատավորման տարրական գործողություններ,
- 3.կարողանա պահպանել փաստաթուղթը,
4. կարողանա կազմել և խմբագրել աղյուսակներ,
- 5.կարողանա տեքստային և հաշվարկային փաստաթղթերում ներդնել գրաֆիկական օբյեկտներ ու նկարադարձումներ, դրանց հետ կատարել տարրական խմբագրման գործողություններ,
- 6.կարողանա տպագրել փաստաթուղթ,
- 8.կարողանա դրսևորել ինտերնետում աշխատելու կարողություն:

**ԳՆԱՂԱՏՄԱՆ ԿԱՐԳԸ`**

Մոդուլի ընդունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար նախատեսված կատարման չափանիշների բավարար մակարդակի ապահովումն է:



**ԱՐԴՅՈՒՆՔ 1.** Կարող է ներկայացնել համակարգչի կառուցվածքը և տիրապետում է Windows օպերացիոն համակարգին ու WORD ծրագրին :

**ԿԱՏԱՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ`**

1. գիտի Microsoft O WORD ծրագրի պատուհանի կառուցվածքը,
2. գիտի բացել նոր փաստաթուղթ,
3. ստեղծաչափի օգնությամբ ճիշտ է մուտքագրում տեքստը, մեծատառ նշանները, պայմանանշանները և թվանշանները,
4. ճիշտ է տեղաշարժում Տեքստային ցուցիչը տեքստի մեջ,
5. ճիշտ է կատարում տարրական ուղղումները տեքստում,
6. ճիշտ է փակում փաստաթուղթը,
- 7.ճիշտ է բացում առկա փաստաթուղթը,
- 8.գիտի Zoom գործիքի հնարավորությունները:

**ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻՋՈՑԸ`**

Ուսանողը բացում է Word ծրագիրը և բանավոր ներկայացնում դրա կառուցվածքը:  
Ուսանողը բացատրում է սխտեմային բլոկի կառուցվածքը` ցուցադրելով հիմնական բաղադրիչները:  
Ուսանողը ներկայացնում է մկնիկի կառուցվածքը:  
Ուսանողը ներկայացնում և ցուցադրում է ստեղծաչափի կառուցվածքային բաղադրիչները:  
Ուսանողը ցուցադրում է փաստաթղթի և Word ծրագրի փակման ձևերը:  
Արդյունքի յուրացումը բավարար է համարվում, եթե առաջադրանքն ընդհանուր առմամբ ճիշտ է կատարվում, թույլ են տրված որոշ անճշտություններ:

**ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԸ`**

Տեսական ուսուցում և գործնական աշխատանք: Ուսուցումն իրականացվում է միատարր համակարգիչների կաբինետում: Անհրաժեշտ է ունենալ համապատասխան ցուցադրական նյութեր, պրոյեկտոր:

**ՈՒՍՈՒՑՄԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԺԱՄԱՔԱՆԱԿԸ`**

Տեսական պարապմունք`	2 ժամ
Գործնական աշխատանք`	4 ժամ

**ԱՐԴՅՈՒՆՔ 2.** Կարողանում է կատարել տեքստային և հաշվարկային փաստաթղթերի մուտքագրման, խմբագրման, ֆորմատավորման տարրական գործողություններ:

**ԿԱՏԱՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ`**

1. ճիշտ է պատրաստում Word ծրագիրը հայերեն և օտար լեզվով տեքստ մուտքագրելու համար,
2. ճիշտ է նշում բառերը և տեքստային հատվածները,
3. ճիշտ է կատարում մուտքագրված տեքստի պարզագույն ֆորմատավորում,
4. կատարել տողերի հավասարեցում,
5. փոխել միջտողային տարածությունները,
6. փոխել տեքստի գույնը,
7. փոխել տեքստի գունային ֆոնը,
8. փոխել պարբերության խորությունները լուսանցքներից,
9. չեղյալ հայտարարել ֆորմատավորման կատարված գործողությունները,
10. վերականգնել ֆորմատավորման չեղյալ հայտարարված գործողությունները,
- 10ա. կրկնել ֆորմատավորման վերջին գործողությունը,
- 10բ. փոխել լուսանցքների խորությունները, ընտրել էջի ուղղաձիգ կամ հորիզոնական դիրքերը, ընտրել թղթի չափերը,
- 10գ. կարող է պատճենել տեքստը,
- 10դ. կարող է տեղափոխել տեքստը,
- 10ե. կարող է տողադարձել տեքստը,
- 10զ. կարող է համարակալել էջերը մենյուի Insert\Page Numbers... հրամանով:

**ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻՋՈՑԸ`**

- 1.Ուսանողին մուտքագրելու համար տրվում մոտ 50 բառ պարունակող հայերեն տեքստ:
- 2.Ուսանողին մուտքագրելու համար տրվում է մոտ 100 բառից կազմված` հայերեն, ռուսերեն, անգլերեն բառեր պարունակող, թվանշաններով և տարբեր սիմվոլներով տեքստ:
- 3.Ուսանողը բացում է նախօրոք պատրաստված փաստաթուղթը և ցուցադրում է մկնիկով և ստեղծաչափով

տեքստը նշելու հնարավորությունները:

4. Ուսանողին տրվում է տարրական ֆորմատավորումներ պարունակող տպագրված փաստաթղթի օրինակ, որի վրա հասկանալի կերպով բացատրված են օգտագործված ֆորմատավորումները: Ուսանողը պետք է համակարգչի մեջ առկա նույն տեքստի չֆորմատավորված տարբերակի վրա կիրառի առաջարկված ֆորմատավորումները:

5. Ուսանողը պատրաստի փաստաթղթի օրինակի վրա ցուցադրում է տեքստի պատճենահանման և տեղափոխման գործողությունները:

6. Ուսանողը կատարում է տողադարձումներ իրեն տրված պատրաստի փաստաթղթի օրինակի վրա: Արդյունքի յուրացումը բավարար է համարվում, եթե հիմնական մասերով առաջադրանքները ճիշտ են կատարվում, սակայն հնարավոր են աննշան, ոչ էական բացթողումներ, վրիպակներ:

**ՄԵԹՈՂԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԸ`**

Տեսական ուսուցում և գործնական աշխատանք: Ռեսուրսումն իրականացվում է անհատական համակարգիչների կաբինետում: Անհրաժեշտ է ունենալ ցուցադրական նյութեր, պրոյեկտոր:

**ՌԻՍՈՒՑՄԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԺԱՄԱՔԱՆԱԿԸ`**

Տեսական պարապմունք`	2 ժամ
Գործնական աշխատանք`	6 ժամ

**ԱՐԴՅՈՒՆՔ 3.** Կարողանում է պահպանել փաստաթուղթը:

**ԿԱՏԱՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ`**

1. ճիշտ է բացատրում փաստաթղթերի պահպանման իմաստը,
2. ճիշտ է պահպանում նոր ստեղծված փաստաթուղթը,
3. ճիշտ է պահպանում փաստաթղթում կատարված ընթացիկ ֆորմատավորումները և փոփոխությունները:

**ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻՋՈՑԸ`**

Ուսանողը պետք է նկարագրի փաստաթղթերի պահպանման իմաստը, բերի տրամաբանական օրինակներ:

Ուսանողը մուտքագրում է մինչև 50 բառից բաղկացած տեքստ և պահպանում է այն` օգտագործելով Save As... պատուհանը:

Ուսանողին տրվում է պատրաստի մուտքագրված փաստաթուղթ, որի մեջ նա կատարում է փոփոխություններ: Հանձնարարվում է պահպանել կատարված ընթացիկ փոփոխությունները:

Արդյունքի ձեռքբերումը բավարար է համարվում առաջադրանքները անբողջությամբ և առանց էական սխալների կատարելու դեպքում:

**ՄԵԹՈՂԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԸ`**

Արդյունքի ուսուցումն իրականացվելու է գործնական պարապմունքների միջոցով:

Պարապմունքներն անհրաժեշտ է իրականացնել անհատական համակարգիչների կաբինետում` ունենալով տարբեր փաստաթղթերի նմուշներ, որոնք անհրաժեշտ է ստեղծել և պահպանել:

**ՌԻՍՈՒՑՄԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԺԱՄԱՔԱՆԱԿԸ`**

Տեսական պարապմունք`	2 ժամ
Գործնական աշխատանք`	6 ժամ

**ԱՐԴՅՈՒՆՔ 4.** Կարողանում է կազմել և խմբագրել աղյուսակներ:

**ԿԱՏԱՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ`**

1. պատրաստել աղյուսակ,
2. աղյուսակի մեջ մուտքագրել տեքստ,
3. կատարել ուղղումներ ու լրացումներ աղյուսակի մեջ,
4. ավելացնել նոր տողեր և նոր սյուներ աղյուսակի մեջ,
5. ջնջել աղյուսակի տողերը և սյուները,
6. փոխել սյունակի լայնությունը Մկնիկի օգնությամբ,
7. փոխել տողի բարձրությունը Մկնիկի օգնությամբ,
8. փոխել աղյուսակի գծերի գույնը ,
9. գունավորել աղյուսակի տողը և սյունը:

**ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻՋՈՑԸ`**

1. Ուսանողին տրվում է աղյուսակի տպագրված օրինակ: Ուսանողը պետք է պատրաստի աղյուսակը առաջարկված ձևով, մուտքագրի տեքստը, ֆորմատավորի աղյուսակը և տպագրի:

2. Ուսանողը բացում է նախօրոք պատրաստված աղյուսակը և կատարում է ֆորմատավորման գործողություններ դրա հետ, պահպանում է վերջնական տարբերակը և տպագրում: Գնահատումը կատարվում է տպագրված օրինակի հիման վրա:

Արդյունքի յուրացումը բավարար է համարվում, եթե առաջադրանքը կատարում է ճիշտ, սակայն թույլատրելի է նաև որոշ աննշան բացթողումներ:

**ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԸ`**

Տեսական ուսուցում և գործնական աշխատանք: Ռեսուրսումն իրականացվում է անհատական համակարգիչների կաբինետում: Անհրաժեշտ է ունենալ աղյուսակների առավել տարածված և կիրառելի նմուշների օրինակներ:

**ՌԻՍՈՒՑԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԺԱՄԱՔԱՆԱԿԸ`**

Տեսական պարապմունք`	2 ժամ
Գործնական աշխատանք`	6 ժամ

**ԱՐԴՅՈՒՆՔ 5.** Կարողանում է տեքստային և հաշվարկային փաստաթղթերում ներդնել գրաֆիկական օբյեկտներ ու նկարազարդումներ, դրանց հետ կատարել տարրական խմբագրման գործողություններ:

**ԿԱՏԱՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ`**

1. գծագրել գրաֆիկական օբյեկտներ,
2. գծագրել գրաֆիկական օբյեկտներ` օգտագործելով Autoshapes պատուհանի պատրաստի ձևերը,
3. գծագրել կանոնավոր պատկերներ,
4. ֆորմատավորել գրաֆիկական օբյեկտները` տեղափոխելով, պատճնելով, շրջելով, չափերը փոխելով,
5. խմբավորել գրաֆիկական օբյեկտները,
6. հավասարեցնել գրաֆիկական օբյեկտներն իրար նկատմամբ,
7. գծագրել տեքստային բլոկներ,
8. գունավորել գրաֆիկական օբյեկտները,
9. երանգավորել գրաֆիկական օբյեկտները,
10. ստվերավորել գրաֆիկական օբյեկտները:

**ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻՋՈՑԸ`**

Ուսանողին տրվում է երկրաչափական պատկերներ պարունակող փաստաթղթի տպագրված օրինակը: Ուսանողը պետք է պատրաստի այդ փաստաթուղթը և տպագրի: Գնահատումը կատարվում է բնօրինակի և տպագրված օրինակի համեմատության հիման վրա:

Ուսանողին տրվում է երկրաչափական պատկերներ պարունակող պատրաստի փաստաթուղթ: Նա այդ փաստաթղթի օրինակի վրա ցուցադրում է պատկերների ֆորմատավորման գործողությունները: Արդյունքի յուրացումը բավարար է համարվում, եթե առաջադրանքներն ընդհանուր առմամբ ճիշտ է կատարվում, սակայն թույլատրելի է նաև որոշ աննշան թերություններ:

**ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԸ`**

Արդյունքի ուսուցումն իրականացվում է գործնական պարապմունքների ձևով, անհատական համակարգիչների կաբինետում: Նպատակահարմար է ունենալ գրաֆիկական օբյեկտների նախապատրաստված ցանկ, որոնց հիման վրա աշխատելը հնարավորություն կտա ձեռք բերել արդյունքով սահմանված բոլոր կարողությունները:

**ՌԻՍՈՒՑԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԺԱՄԱՔԱՆԱԿԸ`**

Տեսական պարապմունք`	2 ժամ
Գործնական աշխատանք`	6 ժամ

**ԱՐԴՅՈՒՆՔ 6.** Կարողանում է տպագրել փաստաթուղթը:

**ԿԱՏԱՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ`**

1. նախադիտման ռեժիմում թերթել փաստաթուղթը,
2. ցուցադրել Print պատուհանի գործառնությունները,
3. տպագրել փաստաթուղթը:

**ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻՋՈՑԸ`**

1. Ուսանողին հանձնարարվում է բացել նախօրոք պատրաստված որևէ տեքստային փաստաթուղթ և տպագրել այն:

2. Ուսանողին հանձնարարվում է բացել նախօրոք պատրաստված որևէ տեքստային փաստաթուղթ և դրա օրինակի վրա բացատրել Print պատուհանի ֆունկցիաները: Արդյունքի յուրացումը համարվում է

բավարար, եթե գործնական հանձնարարությունը ուսանողը կատարում է անսխալ, իսկ պատուհանի ֆունկցիաները բացատրելիս կարող է նաև որոշ անճշտություններ թույլ տալ:

**ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԸ`**

Արդյունքի ուսուցումը իրականացվելու է գործնական պարապմունքի միջոցով` անհատական համակարգիչների կաբինետում:

**ՌԻՍԻՑՍԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԺԱՄԱՔԱՆԱԿԸ`**

Տեսական պարապմունք`	2 ժամ
Գործնական աշխատանք`	4 ժամ

**ԱՐԴՅՈՒՆՔ 7.** Կարողանում է դրսևորել ինտերնետում աշխատելու իմացություն:

**ԿԱՏԱՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ`**

- ա. իմանալ Ինտերնետ հասկացության նշանակությունը.
- բ. ճանաչել Internet Explorer ծրագիրը, իմանալ դրա նշանակությունը.
- գ. իմանալ Ինտերնետային Հասցե հասկացությունը.
- դ. իմանալ History հրամանի նշանակությունը.
- ե. իմանալ Favorites հրամանի նշանակությունը.
- զ. իմանալ Stop հրամանի նշանակությունը.
- է. իմանալ Refresh հրամանի նշանակությունը.
- ը. իմանալ Back և Forward կոճակների նշանակությունը.
- թ. պատճենել տեքստային ինֆորմացիան ինտերնետային էջից.
- ժ. պատճենել գրաֆիկական ինֆորմացիան ինտերնետային էջից.
- ժա. իմանալ ինֆորմացիայի որոնման ինտերնետային ծառայությունները.
- ժբ. ըստ չափանիշների որոնել ինֆորմացիա.
- ժգ. ճիշտ օգտվել ինֆորմացիայի որոնման ինտերնետային ծառայություններից.
- ժդ. իմանալ էլեկտրոնային փոստի նշանակությունը.
- ժե. ուղարկել և ստանալ էլեկտրոնային նամակներ:

**ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻՋՈՑԸ`**

Ուսանողին հանձնարարվում է ներկայացնել Internet Explorer ծրագրի պատուհանի կառուցվածքը, նրա հիմնական կոճակների նշանակությունը:

Ուսանողին հանձնարարվում է ցուցադրել History և Favorites հրամանները, բացատրել:

Ուսանողին հանձնարարվում է բացատրել Stop և Refresh հրամանների նշանակությունը:

Ուսանողին հանձնարարվում է բացատրել Back և Forward կոճակների նշանակությունը:

Ուսանողին հանձնարարվում է բացել որևէ ինտերնետային էջ և պատճենել տեքստային և գրաֆիկական ինֆորմացիան այդ էջից:

Ուսանողին հանձնարարվում է կատարել ինֆորմացիայի որոնում որևէ թեմայի շուրջ` օգտագործելով ինտերնետային փնտրող ծառայությունները:

Ուսանողին հանձնարարվում է բացել նախօրոք պատրաստված էլեկտրոնային փոստը: Ուսանողը պետք է ցուցադրի էլեկտրոնային նամակների ուղարկման և ստացման գործողությունները, էլեկտրոնային փոստով ֆայլերի ուղարկման և ստացման քայլերը:

Արդյունքի յուրացումը համարվում է բավարար, եթե կատարողական մակարդակով առաջադրանքը ճիշտ է կատարվում, սակայն թույլատրվում է տարբերակների ընտրության որոշ շեղումներ:

**ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԸ`**

Տեսական ուսուցում և գործնական աշխատանք: Ուսուցումն իրականացվում է անհատական համակարգիչների կաբինետում, որը ունի ինտերնետին միանալու հնարավորություն:

**ՌԻՍԻՑՍԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԺԱՄԱՔԱՆԱԿԸ`**

Տեսական պարապմունք`	4 ժամ
Գործնական աշխատանք`	8 ժամ

**ՄՈԴՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ`**

**«ԹԵԹԵՎ ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅԱՆ ՀԻՄՈՒՆՔՆԵՐ»**

**ՄՈԴՈՒԼԻ ԴԱՍԻՉԸ`**

**ՄԻՏ 3 – 10 - 001**

**ՄՈԴՈՒԼԻ ՏԵՎՈՂՈՒԹՅՈՒՆԸ`**

**36 ժամ**

**ԴԱՍԸՆԹԱՑԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ ՁԵՎԸ`**

Տեսական պարապմունք`	24 ժամ
Գործնական աշխատանք`	12 ժամ

**ՄՈՒՏՔԱՅԻՆ ՊԱՀԱՆՁՆԵՐԸ`**

**Չկան**

**ՍՈՂՈՒԼԻ ՆՊԱՏԱԿԸ՝**

Այս մոդուլը մշակվել է սովորողի մոտ թեթև արդյունաբերության տեղի, դերի և նշանակության, դրա ենթաճյուղային կառուցվածքի, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության թեթև արդյունաբերության զարգացման նախադրյալների, մասնագիտացման հիմնական ուղղությունների ու հեռանկարների մասին ընդհանուր պատկերացումներ ձևավորելու նպատակով:

**ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ՝** Այս մոդուլը յուրացնելուց հետո ուսանողը պետք է՝

- 1. կարողանա ներկայացնել թեթև արդյունաբերության ձևավորման պատմական անցյալը,
- 2. կարողանա ներկայացնել թեթև արդյունաբերության ներկայիս համայնապատկերը,
- 3. կարողանա մեկնաբանել թեթև արդյունաբերության զարգացման միտումները,
- 4. կարողանա բացատրել արդյունաբերության տարածքային (աշխարհագրական) տեղաբաշխման և զարգացման առանձնահատկությունները:

**ԳՆԱՀԱՏՄԱՆ ԿԱՐԳԸ՝**

Սոդուլի ընդունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար նախատեսված կատարման չափանիշների բավարար մակարդակի ապահովումն է:

**ԱՐԴՅՈՒՆՔ 1.** Կարող է ներկայացնել թեթև արդյունաբերության ձևավորման պատմական անցյալը:

**ԿԱՏԱՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ՝**

- 1. ճիշտ է ներկայացնում թեթև արդյունաբերության ձևավորման և կայացման պատմական ուղին,
- 2. ճիշտ է բացատրում թեթև արդյունաբերության կապը տնտեսության մյուս ճյուղերի հետ,
- 3. ճիշտ է ներկայացնում թեթև արդյունաբերության հումքային բազան և դրանում ընթացող տարածաշրջանային ու տեսակային կազմի փոփոխությունները :

**ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻՋՈՑԸ՝**

Սովորողին կտրվեն որոշակի հարցադրումներ՝ թեթև արդյունաբերության ձևավորման նախադրյալների ու անցած պատմական ուղու, ինչպես նաև տնտեսության մյուս ճյուղերի հետ ունեցած փոխադարձ կապերի մասին: Կհանձնարարվի ներկայացնել թեթև արդյունաբերության հումքային բազան և դրանում ընթացող տարածաշրջանային ու տեսակային կազմի փոփոխությունները: Աշխատանքի գրանցումը կատարելու համար պետք է օգտագործել համապատասխան ստուգման թերթիկ:

Արդյունքի ձեռքբերումը հիմնված կլինի սահմանված բոլոր չափանիշների կատարման վրա, որի համար ուսանողը պետք է կատարի բոլոր առաջադրանքները:

**ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԸ՝**

Դասախոսությունների միջոցով ուսանողին կտրվեն գիտելիքներ թեթև արդյունաբերության ձևավորման և կայացման պատմական ուղու, տնտեսության մյուս ճյուղերի հետ ունեցած փոխադարձ կապերի ու հումքային բազայում ընթացող տարածաշրջանային և տեսակային կազմի փոփոխությունների մասին: Գործնական աշխատանքների ժամանակ ուսանողը պետք է նկարագրի թեթև արդյունաբերության հումքային բազայի բաղադրիչները, մեկնաբանի դրանց առանձնահատկությունները:

Արդյունքի ձեռքբերումը բավարար է, եթե ուսանողը ցուցաբերում է անհրաժեշտ կարողություն:

**ՌԻՍՈՒՑՄԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԺԱՄԱՔԱՆԱԿԸ՝**

Տեսական պարապմունք՝	6 ժամ
Գործնական աշխատանք՝	2 ժամ

**ԱՐԴՅՈՒՆՔ 2.** Կարող է ներկայացնել թեթև արդյունաբերության ներկայիս համայնապատկերը:

**ԿԱՏԱՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ՝**

- 1. ճիշտ է ներկայացնում թեթև արդյունաբերության ենթաճյուղային կառուցվածքը,
- 2. ճիշտ է թվարկում թեթև արդյունաբերության բուսական, կենդանական և քիմիական (արհեստական, սինթետիկ) ծագման հումքատեսակներն ու դրանց հարաբերակցության փոփոխությունների համաշխարհային և տարածաշրջանային միտումները,
- 3. ճիշտ է թվարկում համաշխարհային թեթև արդյունաբերության ժամանակակից առաջատար երկրներն՝ ըստ համաշխարհային շուկայում դրանց ունեցած միջազգային մասնագիտացման ուղղությունների,
- 4. ճիշտ է մեկնաբանում ՀՀ թեթև արդյունաբերության ձևավորման նախադրյալները և ներկա իրավիճակը,
- 5. ճիշտ է համեմատում խորհրդային և հետխորհրդային ժամանակահատվածներում ՀՀ թեթև արդյունաբերության զարգացման տեմպերը՝ ներկայացնելով համոզիչ եզրահանգումներ:

**ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻՋՈՑԸ՝**

Սովորողին կտրվեն որոշակի հարցադրումներ՝ թեթև արդյունաբերության ենթաճյուղային կառուցվածքի, դրանցում կիրառվող բուսական, կենդանական և քիմիական ծագման հումքատեսակների մասին: Կհանձնարարվի թվարկել համաշխարհային թեթև արդյունաբերության ժամանակակից առաջատար երկրներն՝ ըստ համաշխարհային շուկայում դրանց ունեցած միջազգային մասնագիտացման ուղղությունների, ինչպես նաև մեկնաբանել ՀՀ թեթև արդյունաբերության ձևավորման նախադրյալները և ներկա իրավիճակը, համեմատել խորհրդային և հետխորհրդային ժամանակահատվածներում ՀՀ թեթև արդյունաբերության զարգացման տեմպերը՝ ներկայացնելով համոզիչ եզրահանգումներ: Աշխատանքի գրանցումը կատարելու համար պետք է օգտագործել համապատասխան ստուգման թերթիկ:

Արդյունքի ձեռքբերումը հիմնված կլինի սահմանված բոլոր չափանիշների կատարման վրա, որի համար ուսանողը պետք է կատարի բոլոր առաջադրանքները:

**ՄԵԹՈՂԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԸ՝**

Դասախոսությունների միջոցով ուսանողին կտրվեն գիտելիքներ՝ թեթև արդյունաբերության ենթաճյուղային կառուցվածքի, դրանցում կիրառվող բուսական, կենդանական և քիմիական ծագման հումքատեսակների, համաշխարհային թեթև արդյունաբերության ժամանակակից առաջատար երկրների ու դրանց ունեցած միջազգային մասնագիտացման ուղղությունների, ինչպես նաև ՀՀ թեթև արդյունաբերության ձևավորման նախադրյալների և ներկա իրավիճակի մասին: Գործնական աշխատանքների ժամանակ ուսանողը պետք է կատարի համեմատություններ, վերլուծություններ, կազմի զարգացման շարժընթացների գրաֆիկներ կամ ուղղանկյունաձև գծապատկերներ (դիագրամներ):

Արդյունքի ձեռքբերումը բավարար է, եթե ուսանողը ցուցաբերում է անհրաժեշտ կարողություն:

**ՌԻՍԻՑԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԺԱՄԱՔԱՆԱԿԸ՝**

Տեսական պարապմունք՝	6 ժամ
Գործնական աշխատանք՝	2 ժամ

**ԱՐԴՅՈՒՆՔ 3.** Կարող է մեկնաբանել թեթև արդյունաբերության զարգացման միտումները:

**ԿԱՏԱՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ՝**

1. ճիշտ է ներկայացնում թեթև արդյունաբերության ենթաճյուղերի բովանդակային տարբերությունները,
2. ճիշտ է մեկնաբանում թեթև արդյունաբերության ենթաճյուղերի զարգացման միտումները,
3. ճիշտ է ներկայացնում թեթև արդյունաբերության ոլորտի աշխատողի հիմնական զբաղմունքները,
4. ճիշտ է ներկայացնում թեթև արդյունաբերության ոլորտի աշխատողի հիմնական պարտականությունները,
5. ճիշտ է գնահատում ՀՀ թեթև արդյունաբերության զարգացման առաջնահերթությունները,
6. ճիշտ է թվարկում ՀՀ ժամանակակից թեթև արդյունաբերության գլխավոր կենտրոնները, փաստացի աշխատող ընկերությունները, դրանցում թողարկվող հիմնական արտադրատեսակները և վերջիններիս սպառման շուկաները:

**ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻՋՈՑԸ՝**

Սովորողին կտրվեն որոշակի հարցադրումներ՝ թեթև արդյունաբերության ենթաճյուղերի բովանդակային առանձնահատկությունների, դրանց զարգացման միտումների մասին: Կհանձնարարվի ներկայացնել թեթև արդյունաբերության ոլորտի աշխատողի հիմնական զբաղմունքներն ու պարտականությունները: Աշխատանքի գրանցումը կատարելու համար պետք է օգտագործել համապատասխան ստուգման թերթիկ:

Արդյունքի ձեռքբերումը հիմնված կլինի սահմանված բոլոր չափանիշների կատարման վրա, որի համար ուսանողը պետք է կատարի բոլոր առաջադրանքները:

**ՄԵԹՈՂԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԸ՝**

Դասախոսությունների միջոցով ուսանողին կտրվեն գիտելիքներ՝ թեթև արդյունաբերության ենթաճյուղերի բովանդակային առանձնահատկությունների, դրանց զարգացման միտումների, թեթև արդյունաբերության ոլորտի աշխատողի հիմնական զբաղմունքների ու պարտականությունների մասին: Գործնական աշխատանքների ժամանակ ուսանողը պետք է թվարկի և ցուցադրի թեթև արդյունաբերության ոլորտի աշխատողի հիմնական զբաղմունքները:

Արդյունքի ձեռքբերումը բավարար է, եթե ուսանողը ցուցաբերում է անհրաժեշտ կարողություն:

**ՌԻՍԻՑԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԺԱՄԱՔԱՆԱԿԸ՝**

Տեսական պարապմունք՝	6 ժամ
Գործնական աշխատանք՝	4 ժամ

**ԱՐԴՅՈՒՆՔ 4.** Կարող է ներկայացնել թեթև արդյունաբերության տարածքային տեղաբաշխման և զարգացման առանձնահատկությունները:

**ԿԱՏԱՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ՝**

1. Ճիշտ է ներկայացնում թեթև արդյունաբերության և դրա ենթաճյուղերի տարածքային տեղաբաշխման ավանդական կամ հին գործոնները,
2. Ճիշտ է ներկայացնում թեթև արդյունաբերության և դրա ենթաճյուղերի տարածքային տեղաբաշխման նոր գործոնները,
3. Ճիշտ է մեկնաբանում թեթև արդյունաբերության և դրա ենթաճյուղերի զարգացման բնական գործոնները,
4. Ճիշտ է մեկնաբանում թեթև արդյունաբերության և դրա ենթաճյուղերի զարգացման հասարակական գործոնները:

**ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻՋՈՑԸ՝**

1. Ուսանողին հանձնարարվում է թվարկել և ներկայացնել թեթև արդյունաբերության ենթաճյուղերի հիմնական արտադրություններն ու արտադրատեսակները:

2. Ուսանողին հանձնարարվում է թվարկել և ներկայացնել թեթև արդյունաբերության ենթաճյուղերի տեղաբաշխման հին ու նոր գործոնները:

3. Ուսանողին հանձնարարվում է մեկնաբանել արդյունաբերության, մասնավորապես, թեթև արդյունաբերության և դրա ենթաճյուղերի զարգացման հասարակական ու բնական գործոնները:

Գրանցումներ կատարելու համար պետք է օգտագործել համապատասխան ստուգման թերթիկ:  
Արդյունքը կհամարվի ձեռքբերված՝ կատարման բոլոր չափանիշների բավարարման դեպքում:

**ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԸ՝**

Արդյունքի ուսուցումը կատարվում է դասախոսությունների և գործնական պարապմունքների միջոցով: Ուսանողին կառաջարկվեն որոշարկված հարցեր և թեստեր: Գործնական աշխատանքների ժամանակ ուսանողը գծանկարային աշխատանքներ է կատարում ուրվագծային քարտեզի վրա կամ գծագրում է թեթև արդյունաբերության ենթաճյուղային կառուցվածքի գծապատկերներ (սխեմաներ):

Արդյունքի ձեռքբերումը բավարար է, եթե ուսանողը ցուցաբերում է անհրաժեշտ կարողություն:

**ՌԻՍՈՒՑՄԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԺԱՄԱՔԱՆԱԿԸ՝**

Տեսական պարապմունք՝	6 ժամ
Գործնական աշխատանք՝	4 ժամ

**ՄՈԴՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ՝**

**«ՏԵՔՍՏԻԼ ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅԱՆ ՀԻՍՈՒՆՔՆԵՐ»**

**ՄՈԴՈՒԼԻ ԴԱՍԻՉԸ՝**

**ՄԻՏ 3 – 10 - 002**

**ՄՈԴՈՒԼԻ ՏԵՎՈՂՈՒԹՅՈՒՆԸ՝**

**54 ժամ**

**ԴԱՍԸՆԹԱՑԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ ՁԵՎԸ՝**

Տեսական պարապմունք՝	30 ժամ
Գործնական աշխատանք՝	24 ժամ

**ՄՈՒՏՔԱՅԻՆ ՊԱՅԱՆՁՆԵՐԸ՝**

Այս մոդուլն ուսումնասիրելու համար սովորողը պետք է անցած լինի ՄԻՏ 3-10-001 «Թեթև արդյունաբերության հիմունքներ» մոդուլը:

**ՄՈԴՈՒԼԻ ՆՊԱՏԱԿԸ՝**

Այս մոդուլը մշակվել է ուսանողների մոտ թեթև արդյունաբերության կառուցվածքում տեքստիլ արդյունաբերության կարևորության, դրա դերի և նշանակության, ինչպես նաև հիմնական արտադրությունների զարգացման նախադրյալների, հեռանկարների ու դրանցում կիրառվող տեխնիկական միջոցների մասին ընդհանուր պատկերացումներ ձևավորելու նպատակով:

**ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ՝**

Այս մոդուլը յուրացնելուց հետո ուսանողը պետք է՝

1. կարողանա ներկայացնել տեքստիլ արդյունաբերության բովանդակությունը,
2. կարողանա ներկայացնել տեքստիլ արդյունաբերության հունքային բազայի և արտադրական կառուցվածքի առանձնահատկություններն՝ ըստ հիմնական արտադրությունների,
3. կարողանա բացատրել տեքստիլ արդյունաբերության, մասնավորապես, մասնաձագործության արտադրական գործընթացների ընդհանուր պատկերը,
4. կարողանա նկարագրել տեքստիլ արդյունաբերության մեջ կիրառվող տեխնիկական միջոցները:

**ԳՆԱՀԱՏՄԱՆ ԿԱՐԳԸ՝**

Մոդուլի ընդունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար նախատեսված կատարման չափանիշների բավարար մակարդակի ապահովումն է:

**ԱՐԴՅՈՒՆՔ 1.** Կարող է ներկայացնել տեքստիլ արդյունաբերության բովանդակությունը:

**ԿԱՏԱՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ`**

1. Ճիշտ է ներկայացնում տեքստիլ արդյունաբերությունը, որպես թեթև արդյունաբերության առաջատար ենթաճյուղ,
2. Ճիշտ է ներկայացնում «տեքստիլ» բառի իմաստը` միաժամանակ նշելով հիմնական տեքստիլ արտադրություններն ու արտադրատեսակները,
3. Ճիշտ է ներկայացնում տեքստիլագործի հիմնական զբաղմունքները,
4. Ճիշտ է ներկայացնում տեքստիլագործի հիմնական աշխատանքային պարտականությունները,
5. Ճիշտ է պարզաբանում համաշխարհային տեքստիլ արդյունաբերության տեղաբաշխման սկզբունքները,
6. Ճիշտ է գնահատում ՀՀ տեքստիլ արդյունաբերության ներկա վիճակը` միաժամանակ մատնանշելով վերջինիս զարգացման հեռանկարները:

**ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻՋՈՑԸ`**

Ուսանողին կտրվեն հարցեր` տեքստիլ արդյունաբերության, որպես թեթև արդյունաբերության առաջատար ենթաճյուղի, տեքստիլագործի հիմնական զբաղմունքների ու աշխատանքային պարտականությունների, ինչպես նաև համաշխարհային տեքստիլ արդյունաբերության տեղաբաշխման սկզբունքների մասին: Կառաջադրվեն հարցեր ՀՀ տեքստիլ արդյունաբերության ներկա վիճակի վերաբերյալ:

Արդյունքը կհամարվի ձեռքբերված` կատարման բոլոր չափանիշների բավարարման դեպքում:

**ՄԵԹՈՂԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԸ`**

Արդյունքի ուսուցումը կատարվելու է դասախոսությունների և գործնական պարապմունքների ձևով: Սովորողին կտրվեն գիտելիքներ` տեքստիլ արդյունաբերության հիմնական արտադրությունների ու արտադրատեսակների, տեքստիլագործի հիմնական զբաղմունքների ու աշխատանքային պարտականությունների մասին: Գործնական պարապմունքների ժամանակ ուսանողը պետք է գծանկարի տեքստիլ արդյունաբերության կառուցվածքը, համեմատի տարբե արտադրությունների տեղաբաշխման սկզբունքները, գնահատի ՀՀ տեքստիլ արդյունաբերության ներկա վիճակը և հեռանկարները:

Արդյունքի ձեռքբերումը բավարար է, եթե ուսանողը ցուցաբերում է անհրաժեշտ կարողություն:

**ՈՒՍՈՒՑՄԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԺԱՄԱՔԱՆԱԿԸ`**

Տեսական պարապմունք`	8 ժամ
Գործնական աշխատանք`	6 ժամ

**ԱՐԴՅՈՒՆՔ 2.** Կարող է ներկայացնել տեքստիլ արդյունաբերության հունքային բազայի և արտադրական կառուցվածքի առանձնահատկություններն` ըստ հիմնական արտադրությունների:

**ԿԱՏԱՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ`**

1. Ճիշտ է ներկայացնում տեքստիլ արդյունաբերության բուսական ծագման հունքային բազան` թելատու մշակաբույսերը, ինչպես նաև դրանց տարածման շրջաններն ու արտադրող առաջատար երկրները,
2. Ճիշտ է ներկայացնում տեքստիլ արդյունաբերության կենդանական ծագման հունքային բազան, ինչպես նաև ոչխարաբուծության, այծաբուծության, ուղտաբուծության, ճագարաբուծության, ուղտայծաբուծության և շերամապահության տարածման շրջաններն ու առաջատար երկրները,
3. Ճիշտ է ներկայացնում բամբակե մանվածքի (թելի) արտադրությունը,
4. Ճիշտ է ներկայացնում բրդե մանվածքի (թելի) արտադրությունը,
5. Ճիշտ է բացատրում մետաքսե մանվածքի (թելի) արտադրությունը,
6. Ճիշտ է բացատրում վուլշե մանվածքի (թելի) արտադրությունը,
7. Ճիշտ է պարզաբանում արհեստական և սինթետիկ մանվածքների (թելերի) արտադրությունները:

**ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻՋՈՑԸ`**

Ուսանողին կտրվեն հարցեր` տեքստիլ արդյունաբերության բուսական ծագման հունքային բազայի` թելատու մշակաբույսերի, ինչպես նաև դրանց տարածման շրջանների ու արտադրող առաջատար երկրների մասին: Կառաջադրվեն հարցեր` տեքստիլ արդյունաբերության կենդանական ծագման հունքային բազայի` ոչխարաբուծության, այծաբուծության, ուղտաբուծության, ճագարաբուծության, ուղտայծաբուծության և շերամապահության տարածման շրջանների ու



առաջատար երկրների մասին: Ուսանողը պետք է մեկնաբանի բանբան, բրդե, մետաքսե և վուշե մանվածքի արտադրության հիմնական առանձնահատկությունները:

Արդյունքը կհամարվի ձեռքբերված՝ կատարման բոլոր չափանիշների բավարարման դեպքում:

### **ՄԵԹՈՂԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԸ՝**

Արդյունքի ուսուցումը կատարվելու է դասախոսությունների և գործնական պարապմունքների ձևով: Սովորողին կտրվեն գիտելիքներ տեքստիլ արդյունաբերության բուսական և կենդանական ծագման հումքատեսակների, դրանց արտադրությամբ ու ներմամբ զբաղվող գյուղատնտեսական արտադրությունների մասին: Գործնական պարապմունքների ժամանակ ուսանողը պետք է գծանկարի և բացատրի թելատու մշակաբույսերի դասակարգման սկզբունքները, ուրվագծային քարտեզի վրա առանձնացնի որոշ տեխնիկական մակաբույսերի արտադրությամբ ու անասնապահությամբ առավել զարգացած երկրները:

Արդյունքի ձեռքբերումը բավարար է, եթե ուսանողը ցուցաբերում է անհրաժեշտ կարողություն:

### **ՌԻՍՈՒՑԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԺԱՄԱՔԱՆԱԿԸ՝**

Տեսական պարապմունք՝	8 ժամ
Գործնական աշխատանք՝	6 ժամ

**ԱՐԴՅՈՒՆՔ 3.** Կարող է բացատրել տեքստիլ արդյունաբերության, մասնավորապես, մանածագործության արտադրական գործընթացների ընդհանուր պատկերը:

### **ԿԱՏԱՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ՝**

1. ճիշտ է բացատրում հումքի զտման, մաքրման և լվացման գործընթացները,
2. ճիշտ է ներկայացնում հումքի նախնական (սկզբնական) մշակման գործընթացների հաջորդականությունը,
3. ճիշտ է ներկայացնում զգման, ոլորման, ձգման, սանդեքագզման, ներկման, փաթաթման, հյուսման և այլ գործընթացները:

### **ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻՋՈՑԸ՝**

Ուսանողին կտրվեն հարցեր տեքստիլ արդյունաբերության մեջ կիրառվող հումքի զտման, մաքրման և լվացման գործընթացների, ինչպես նաև հումքի նախնական (սկզբնական) մշակման գործընթացների հաջորդականության մասին: Կհանձնարարվեն թեստեր, որոնցից կպարզվի ուսանողի իմացությունը տարբեր արտադրական գործընթացների առանձնահատկությունների հատկանիշներով մասին:

Արդյունքը կհամարվի ձեռքբերված՝ կատարման բոլոր չափանիշների բավարարման դեպքում:

### **ՄԵԹՈՂԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԸ՝**

Արդյունքի ուսուցումը կատարվելու է դասախոսությունների և գործնական պարապմունքների ձևով: Սովորողին կտրվեն գիտելիքներ՝ տեքստիլ արդյունաբերության մեջ կիրառվող հումքի զտման, մաքրման և լվացման գործընթացների, ինչպես նաև հումքի նախնական (սկզբնական) մշակման գործընթացների հաջորդականության մասին:

Արդյունքի ձեռքբերումը բավարար է, եթե ուսանողը ցուցաբերում է անհրաժեշտ կարողություն:

### **ՌԻՍՈՒՑԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԺԱՄԱՔԱՆԱԿԸ՝**

Տեսական պարապմունք՝	6 ժամ
Գործնական աշխատանք՝	6 ժամ

**ԱՐԴՅՈՒՆՔ 4.** Կարող է նկարագրել տեքստիլ արդյունաբերության մեջ կիրառվող տեխնիկական միջոցները:

### **ԿԱՏԱՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ՝**

1. ճիշտ է թվարկում ձևավոր մանվածք արտադրող մեքենաները և սարքավորումները,
2. ճիշտ է ներկայացնում ժապավենաթել արտադրող մեքենաները և սարքավորումները,
3. ճիշտ է ներկայացնում հաստաթել արտադրող մեքենաները և սարքավորումները,
4. ճիշտ է ներկայացնում երիզներ և ցանցեր հյուսող մեքենաներն ու սարքավորումները,
5. ճիշտ է ներկայացնում շղարշ և ժանյակ արտադրող մեքենաներն ու սարքավորումները,
6. ճիշտ է ներկայացնում մահուդ արտադրող մեքենաները և սարքավորումները,
7. ճիշտ է ներկայացնում ոլորող մեքենաները և սարքավորումները,
8. ճիշտ է ներկայացնում սանդեքող մեքենաները և սարքավորումները:

### **ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻՋՈՑԸ՝**

Ուսանողին կտրվեն հարցեր՝ ձևավոր մանվածք արտադրող մեքենաների և սարքավորումների մասին: Կտրվի առաջադրանք՝ ներկայացնել ժապավենաթել և հաստաթել արտադրող մեքենաները, երիզներ ու

ցանցեր հյուսող մեքենաները: Կառաջադրվի նաև թվարկել շղարշ, ժանյակ, մահուդ արտադրող մեքենաները: Ուսանողը պետք է գնահատի մեքենաների և սարքավորումների տեխնիկական հնարավորությունները:

Արդյունքը կհամարվի ձեռքբերված՝ կատարման բոլոր չափանիշների բավարարման դեպքում:

### ՄԵԹՈՂԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԸ՝

Արդյունքի ուսուցումը կատարվելու է դասախոսությունների և գործնական պարապմունքների ձևով: Սովորողին կտրվեն գիտելիքներ՝ ձևավոր մանվածք, ժապավենաթել, հաստաթել ժանյակ, մահուդ արտադրող, ինչպես նաև երիզներ ու ցանցեր հյուսող մեքենաների և սարքավորումների մասին:

Արդյունքի ձեռքբերումը բավարար է, եթե ուսանողը ցուցաբերում է անհրաժեշտ կարողություն:

### ՌԻՍԻՑՍԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԺԱՄԱՔԱՆԱԿԸ՝

Տեսական պարապմունք՝	8 ժամ
Գործնական աշխատանք՝	6 ժամ

### ՄՈԴՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ՝

### «ՄԱՆՐԱԹԵԼ ԵՎ ՄԱՆՎԱԾՔ»

### ՄՈԴՈՒԼԻ ԴԱՍԻՉԸ՝

ՄԻՏ 3 – 10 – 003

### ՄՈԴՈՒԼԻ ՏԵՎՈՂՈՒԹՅՈՒՆԸ՝

36 ժամ

### ԴԱՍԸՆԹԱՑԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ ՁԵՎԸ՝

Տեսական պարապմունք՝	24 ժամ
Գործնական աշխատանք՝	12 ժամ

### ՄՈՒՏՔԱՅԻՆ ՊԱՅԱՆՋՆԵՐԸ՝

Այս մոդուլն ուսումնասիրելու համար սովորողը պետք է անցած լինի ՄԻՏ 3-10-001 «Թեթև արդյունաբերության հիմունքներ» և ՄԻՏ 3-10-002 «Տեքստիլ արդյունաբերության հիմունքներ» մոդուլները:

### ՄՈԴՈՒԼԻ ՆՊԱՏԱԿԸ՝

Այս մոդուլը մշակվել է, որպեսզի սովորողի մոտ ձևավորեն ընդհանուր պատկերացումներ մանրաթելի և մանվածքի (թելի), ինչպես նաև վերջինիս արտադրության կազմակերպման հիմնական գործընթացային համակարգերի մասին:

### ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ՝

Այս մոդուլը յուրացնելուց հետո ուսանողը պետք է՝

1. կարողանա ներկայացնել մանրաթելը և դրա տեսակները,
2. կարողանա ներկայացնել մանրաթելերի ֆիզիկա-մեխանիկական հատկանիշները,
3. կարողանա ներկայացնել մանվածքի արտադրության (մանածագործության) համակարգերը:

### ԳՆԱՂԱՏՄԱՆ ԿԱՐԳԸ՝

Մոդուլի ընդունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար նախատեսված կատարման չափանիշների բավարար մակարդակի ապահովումն է:

**ԱՐԴՅՈՒՆՔ 1.** Կարող է ներկայացնել մանրաթելը և դրա տեսակները:

### ԿԱՏԱՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ՝

1. ճիշտ է սահմանում «մանրաթելը» (կամ «տեքստիլ մանրաթելը»),
2. ճիշտ է ներկայացնում տարրական և տեխնիկական մանրաթելերն ու դրանց հիմնական տարբերությունները,
3. ճիշտ է ներկայացնում բնական՝ բուսական, կենդանական և հանքային ծագման մանրաթելերը,
4. ճիշտ է ներկայացնում քիմիական՝ արհեստական և սինթետիկ մանրաթելերը:

### ԳՆԱՂԱՏՄԱՆ ՄԻՋՈՑԸ՝

Ուսանողին կտրվեն հարցեր մանրաթելի բովանդակության և տեսակների մասին: Ուսանողին կտրվի առաջադրանք՝ բացատրել տարրական և տեխնիկական մանրաթելերն ու դրանց հիմնական տարբերությունները: Կհանձնարարվեն թեստեր, որոնցից կպարզվի ուսանողի իմացությունը բնական և քիմիական մանրաթելերի ու դրանց հիմնական առանձնահատկությունների մասին:

Արդյունքը կհամարվի ձեռքբերված՝ կատարման բոլոր չափանիշների բավարարման դեպքում:

### ՄԵԹՈՂԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԸ՝

Արդյունքի ուսուցումը կատարվելու է դասախոսությունների և գործնական աշխատանքների ձևով: Սովորողին կտրվեն գիտելիքներ մանրաթելի բովանդակության և տեսակների, ինչպես նաև դրանց դասակարգման վերաբերյալ:

Արդյունքի ձեռքբերումը բավարար է, եթե ուսանողը ցուցաբերում է անհրաժեշտ կարողություն:

#### **ՈՒՍՈՒՑՄԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԺԱՄԱՔԱՆԱԿԸ`**

Տեսական պարապմունք`	8 ժամ
Գործնական աշխատանք`	4 ժամ

**ԱՐԴՅՈՒՆՔ 2.** Կարող է ներկայացնել մանրաթելերի ֆիզիկա-մեխանիկական հատկանիշները:

#### **ԿԱՏԱՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ`**

1. Ճիշտ է բացատրում մանրաթելի գծային խտությունը` ներկայացնելով վերջինիս չափման միավորը («տեքստ»),
2. Ճիշտ է ներկայացնում մանրաթելի երկարության և ամրության բնութագրիչները,
3. Ճիշտ է ներկայացնում մանրաթելի առաձգականության (ձգման, սեղմման) հատկանիշը,
4. Ճիշտ է ներկայացնում մանրաթելի դիմադրողականության (ճկման, ոլորման, մաշելիության, սահքի) հատկանիշը,
5. Ճիշտ է բացատրում մանրաթելի ջերմահաղորդականության հատկանիշը,
6. Ճիշտ է մեկնաբանում մանրաթելի էլեկտրահաղորդականության հատկանիշը,
7. Ճիշտ է ներկայացնում մանրաթելի խոնավաթափանցելիության հատկանիշը:

#### **ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻՋՈՑԸ`**

Ուսանողին կտրվեն հարցեր մանրաթելի գծային խտության, երկարության և ամրության հիմնական բնութագրիչների մասին: Ուսանողին կտրվի առաջադրանք` բացատրել մանրաթելի առաձգականության, դիմադրողականության, ջերմահաղորդականության, էլեկտրահաղորդականության և խոնավաթափանցելիության հատկանիշները:

Արդյունքը կհամարվի ձեռքբերված` կատարման բոլոր չափանիշների բավարարման դեպքում:

#### **ՄԵԹՈՂԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԸ`**

Արդյունքի ուսուցումը կատարվելու է դասախոսությունների և գործնական պարապմունքի ձևով: Սովորողին կտրվեն գիտելիքներ` մանրաթելի գծային խտության, երկարության և ամրության հիմնական բնութագրիչների, ինչպես նաև առաձգականության, դիմադրողականության, ջերմահաղորդականության, էլեկտրահաղորդականության և խոնավաթափանցելիության հատկանիշների մասին:

Արդյունքի ձեռքբերումը բավարար է, եթե ուսանողը ցուցաբերում է անհրաժեշտ կարողություն:

#### **ՈՒՍՈՒՑՄԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԺԱՄԱՔԱՆԱԿԸ`**

Տեսական պարապմունք`	8 ժամ
Գործնական աշխատանք`	4 ժամ

**ԱՐԴՅՈՒՆՔ 3.** Կարող է ներկայացնել մանվածքի արտադրության (մանածագործության) համակարգերը:

#### **ԿԱՏԱՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ`**

1. Ճիշտ է սահմանում «մանվածքը»,
2. Ճիշտ է ներկայացնում «մանրաթելի» և «մանվածքի» տարբերությունները,
3. Ճիշտ է թվարկում մանվածքի արտադրության տեխնոլոգիական անցումների հաջորդականությունը,
4. Ճիշտ է բացատրում մանվածքի արտադրության սարքային (ապարատային) համակարգը,
5. Ճիշտ է ներկայացնում մանվածքի արտադրության սանդեքագզման (սովորական) համակարգը,
6. Ճիշտ է ներկայացնում մանվածքի արտադրության սանրման (սանրային) համակարգը,
7. Ճիշտ է բացատրում մանվածքի արտադրության խառնաթելային (մեջանժե) համակարգը,
8. Ճիշտ է ներկայացնում մանածագործական հիմնական զբաղմունքները,
9. Ճիշտ է ներկայացնում մանածագործի հիմնական աշխատանքային պարտականությունները:

#### **ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻՋՈՑԸ`**

Ուսանողին կտրվեն հարցեր մանվածքի բովանդակության և մանրաթելից ունեցած տարբերությունների մասին: Ուսանողին կտրվի առաջադրանք` բացատրել մանվածքի արտադրության տեխնոլոգիական անցումների հաջորդականությունը, սարքային, սանդեքագզման, սանրման և

խառնաթելային համակարգերը: Կառաջադրվի ներկայացնել մանածագործական հիմնական զբաղմունքներն ու մանածագործի աշխատանքային պարտականությունները:

Արդյունքը կհամարվի ձեռքբերված՝ կատարման բոլոր չափանիշների բավարարման դեպքում:

### **ՄԵԹՈՂԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԸ՝**

Արդյունքի ուսուցումը կատարվելու է դասախոսությունների և գործնական պարապմունքների ձևով: Սովորողին կտրվեն գիտելիքներ՝ մանվածքի արտադրության տեխնոլոգիական անցումների հաջորդականության, սարքային, սանդեքագզման, սանրման և խառնաթելային համակարգերի մասին: Գործնական պարապմունքների ժամանակ ուսանողը կթվարկի և կցուցադրի մանածագործական հիմնական զբաղմունքներն ու մանածագործի աշխատանքային պարտականությունները:

Արդյունքի ձեռքբերումը բավարար է, եթե ուսանողը ցուցաբերում է անհրաժեշտ կարողություն:

### **ՌԻՍԻՑՍԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԺԱՄԱՔԱՆԱԿԸ՝**

Տեսական պարապմունք՝	8 ժամ
Գործնական աշխատանք՝	4 ժամ

### **ՄՈԴՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ՝**

### **«ՄԱՆԱՅՈՒՄՔԻ ՓԻՐԵՑՈՒՄ ԵՎ ԳԶՈՒՄ»**

### **ՄՈԴՈՒԼԻ ԴԱՍԻՉԸ՝**

ՄԻՏ 3 – 10 - 004

### **ՄՈԴՈՒԼԻ ՏԵՎՈՂՈՒԹՅՈՒՆԸ՝**

54 ժամ

### **ԴԱՍԸՆԹԱՑԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ ՉԵՎԸ՝**

Տեսական պարապմունք՝	24 ժամ
Գործնական աշխատանք՝	30 ժամ

### **ՄՈՒՏՔԱՅԻՆ ՊԱՅԱՆՋՆԵՐԸ՝**

Այս մոդուլն ուսումնասիրելու համար սովորողը պետք է անցած լինի ԱԱՕ 3-10-001 «Անվտանգություն և առաջին օգնություն», ՄԻՏ 3-10-001 «Թեթև արդյունաբերության հիմունքներ», ՄԻՏ 3-10-002 «Տեքստիլ արդյունաբերության հիմունքներ» և ՄԻՏ 3-10-003 «Մանրաթել և մանվածք» մոդուլները:

### **ՄՈԴՈՒԼԻ ՆՊԱՏԱԿԸ՝**

Այս մոդուլը մշակվել է, որպեսզի սովորողի մոտ ձևավորվեն մանահումքի մասնաբաժանման, գտման, փխրեցման և գզման, ինչպես նաև համաչափ (հավասարաչափ) մանանյութի արտադրման ու փխրեցմող-գզող մեքենայի վրա աշխատելու կարողություններ:

### **ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ՝**

Այս մոդուլը յուրացնելուց հետո ուսանողը պետք է՝

1. կարողանա նախապատրաստել մանահումքը,
2. կարողանա ներկայացնել փխրեցմող - գզող մեքենայի տեխնիկատեխնոլոգիական բնութագիրը,
3. կարողանա իրականացնել փխրեցմող-գզող մեքենայի տեխնոլոգիական շահագործումը,
4. կարողանա իրագործել մանահումքի գզում, խառնակում և մանանյութի արտադրություն:

### **ԳՆԱՅԱՏՄԱՆ ԿԱՐԳԸ՝**

Մոդուլի ընդունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար նախատեսված կատարման չափանիշների բավարար մակարդակի ապահովումն է:

### **ԱՐԴՅՈՒՆՔ 1. Կարող է նախապատրաստել մանահումքը:**

### **ԿԱՏԱՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ՝**

1. ճիշտ է դասավորում բամբակի հակերը՝ բամբակե մանրաթելի մամլած տրցակները,
2. ճիշտ է կատարում բամբակի հակերի ձեռքով կամ ցանցասեղներով մասնաբաժանումն ավելի փոքր պատառիկների,
3. ճիշտ է գտում (մաքրում) բամբակի հակերը և պատառիկները՝ հեռացնելով մուլաբույսերի մնացորդներն ու կոշտուկները,
4. ճիշտ է թելատում նախապես ջերմամշակված վուշահումքը,
5. ճիշտ է առանձնացնում բրդահումքի օտարածին խառնուկները,
6. ճիշտ է թելատում բոժոժի կծիկները,
7. ճիշտ է առանձնացնում վնասված (կարծ) մանրաթելերը:

### **ԳՆԱՅԱՏՄԱՆ ՄԻՋՈՑԸ՝**

Ուսանողին կտրվեն հարցեր մանահումքի դասավորման, մասնաբաժանման և թելատման աշխատանքային սկզբունքների վերաբերյալ: Ուսանողին կտրվի առաջադրանք՝ դասավորել բամբակի

հակերը, կատարել դրանց մասնաբաժանում, ինչպես նաև թելատել վուշահումքը և բոժոժի կծիկները՝ միաժամանակ առանձնացնելով վնասված մանրաթելերը:

Արդյունքը կհամարվի ձեռքբերված՝ կատարման բոլոր չափանիշների բավարարման դեպքում:

#### **ՄԵԹՈՂԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԸ՝**

Արդյունքի ուսուցումը կատարվելու է դասախոսությունների և գործնական պարապմունքների ձևով: Սովորողին կտրվեն գիտելիքներ՝ մանահումքի դասավորման, մասնաբաժանման և թելատման աշխատանքային սկզբունքների վերաբերյալ: Գործնական պարապմունքների ժամանակ ուսանողը պետք է կարողանա ցուցադրել բամբակի հակերի ձեռքով կամ ցանցասեղներով մասնաբաժանելու, մոլաբույսերի մնացորդներն ու կոշտուկները հեռացնելու, վուշահումքը և բոժոժի կծիկները թելատելու կարողություններ:

Արդյունքի ձեռքբերումը բավարար է, եթե ուսանողը ցուցաբերում է անհրաժեշտ կարողություն:

#### **ՌԻՍՈՒՑԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԺԱՄԱՔԱՆԱԿԸ՝**

Տեսական պարապմունք՝	6 ժամ
Գործնական աշխատանք՝	8 ժամ

**ԱՐԴՅՈՒՆՔ 2.** Կարող է ներկայացնել փխրեցնող - գզող մեքենայի տեխնիկատեխնոլոգիական բնութագիրը:

#### **ԿԱՏԱՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ՝**

1. Ճիշտ է ցուցադրում փխրեցնող - գզող մեքենայի աշխատանքային հիմնական միացքները (ազրեգատներն), հանգույցներն ու մասերը,
2. Ճիշտ է բացատրում փխրեցնող - գզող մեքենայի աշխատանքային հիմնական գործողությունները և դրանց սկզբունքները,
3. Ճիշտ է մեկնաբանում փխրեցնող - գզող մեքենայի աշխատանքի ընթացքում առաջացող ընդհատումների պատճառները,
4. Ճիշտ է բացահայտում փխրեցնող - գզող մեքենայի անսարքությունները,
5. Ճիշտ է սահմանում տարբեր սերնդի և մակնիշի փխրեցնող - գզող մեքենաների առավելություններն ու թերությունները:

#### **ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻՋՈՑԸ՝**

Ուսանողին կտրվեն հարցեր՝ փխրեցնող - գզող մեքենայի աշխատանքային հիմնական միացքների (ազրեգատների), հանգույցների ու մասերի, ինչպես նաև փխրեցնող - գզող մեքենայի աշխատանքային հիմնական գործողությունների և դրանց սկզբունքների մասին: Ուսանողին կտրվի առաջադրանք՝ բացատրել փխրեցնող - գզող մեքենայի անսարքությունները, սահմանել տարբեր սերնդի և մակնիշի փխրեցնող - գզող մեքենաների առավելություններն ու թերությունները:

Արդյունքը կհամարվի ձեռքբերված՝ կատարման բոլոր չափանիշների բավարարման դեպքում:

#### **ՄԵԹՈՂԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԸ՝**

Արդյունքի ուսուցումը կատարվելու է դասախոսությունների և գործնական պարապմունքների ձևով: Սովորողին կտրվեն գիտելիքներ՝ փխրեցնող - գզող մեքենայի աշխատանքային հիմնական միացքների (ազրեգատների), հանգույցների ու մասերի, ինչպես նաև փխրեցնող - գզող մեքենայի աշխատանքային հիմնական գործողությունների և դրանց սկզբունքների մասին: Գործնական պարապմունքների ժամանակ ուսանողը պետք է կարողանա ցուցադրել փխրեցնող - գզող մեքենայի աշխատանքային հիմնական միացքները (ազրեգատներն), հանգույցներն ու մասերը, բացատրել փխրեցնող - գզող մեքենայի աշխատանքային հիմնական գործողությունները և դրանց սկզբունքները:

Արդյունքի ձեռքբերումը բավարար է, եթե ուսանողը ցուցաբերում է անհրաժեշտ կարողություն:

#### **ՌԻՍՈՒՑԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԺԱՄԱՔԱՆԱԿԸ՝**

Տեսական պարապմունք՝	6 ժամ
Գործնական աշխատանք՝	8 ժամ

**ԱՐԴՅՈՒՆՔ 3.** Կարող է կատարել փխրեցնող-գզող մեքենայի տեխնոլոգիական շահագործմանը:

#### **ԿԱՏԱՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ՝**

1. Ճիշտ է կատարում փխրեցնող - գզող մեքենայի տեխնոլոգիական շահագործման նախապատրաստական աշխատանքները,
2. Ճիշտ է լցնում փխրեցնող - գզող մեքենայի մանախցիկները,
3. Ճիշտ է միացնում և գործարկում փխրեցնող - գզող մեքենան,
4. Ճիշտ է վերահսկում փխրեցնող - գզող մեքենայի աշխատանքային գործողությունները,
5. Ճիշտ է վերացնում մանրաթելերի խզվածքները՝ հյուսելով համապատասխան հանգույցներ,
6. Ճիշտ է վերացնում փխրեցնող - գզող մեքենայի աշխատանքի ընթացքում առաջացող մանր անսարքությունները,

7. Ճիշտ է պահպանում փխրեցնող - գզող մեքենայի շահագործման տեխնիկական անվտանգության կանոնները:

**ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻՋՈՑԸ՝**

Ուսանողին կտրվեն հարցեր՝ փխրեցնող - գզող մեքենայի տեխնոլոգիական շահագործման նախապատրաստական աշխատանքների, լցումման, միացման, գործարկման և աշխատանքային գործընթացի վերահսկման սկզբունքների մասին: Ուսանողին կտրվի առաջադրանք՝ լցնել, միացնել, գործարկել փխրեցնող-գզող մեքենան, ինչպես նաև վերացնել մանրաթելերի հմարավոր խզվախքներն ու փխրեցնող-գզող մեքենայի անսարքությունները:

Արդյունքը կհամարվի ձեռքբերված՝ կատարման բոլոր չափանիշների բավարարման դեպքում:

**ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԸ՝**

Արդյունքի ուսուցումը կատարվելու է դասախոսությունների և գործնական պարապմունքների ձևով: Սովորողին կտրվեն գիտելիքներ՝ փխրեցնող - գզող մեքենայի տեխնոլոգիական շահագործման նախապատրաստական աշխատանքների, լցումման, միացման, գործարկման և աշխատանքային գործընթացի վերահսկման սկզբունքների մասին: Գործնական պարապմունքների ժամանակ ուսանողը պետք է կարողանա լցնել, միացնել, գործարկել փխրեցնող-գզող մեքենան, ինչպես նաև վերացնել մանրաթելերի հմարավոր խզվախքներն ու փխրեցնող-գզող մեքենայի անսարքությունները՝ միաժամանակ պահպանելով փխրեցնող - գզող մեքենայի շահագործման տեխնիկական անվտանգության կանոնները:

Արդյունքի ձեռքբերումը բավարար է, եթե ուսանողը ցուցաբերում է անհրաժեշտ կարողություն:

**ՌԻՍԻՑՄԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԺԱՄԱՔԱՆԱԿԸ՝**

Տեսական պարապմունք՝	6 ժամ
Գործնական աշխատանք՝	8 ժամ

**ԱՐԴՅՈՒՆՔ 4.** Կարող է իրագործել մանահումքի գզումը, խառնակումը և մանանյութի արտադրությունը:

**ԿԱՏԱՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ՝**

1. Ճիշտ է ներկայացնում միջնամանրաթելային մանահումքի զտման սանդեքագզման (սովորական) համակարգը,
2. Ճիշտ է բացատրում մանահումքի սանդեքագզման համակարգի ինքնաշարժ սնուցմամբ միացքի (ազրեգատի) աշխատանքային գործընթացը,
3. Ճիշտ է ցուցադրում մանահումքի սանդեքագզման համակարգի ձեռքով սնուցմամբ միացքի աշխատանքային գործընթացը,
4. Ճիշտ է ներկայացնում մանահումքի սանդեքագզման համակարգում խառնիչի դերը և մանահումքի խառնակման նշանակությունը,
5. Ճիշտ է բացատրում դանակավոր թմբուկներում մանահումքի գզման գործընթացը,
6. Ճիշտ է տեղահանում զգված մանահումքով դանակավոր թմբուկները,
7. Ճիշտ է կատարում զգված մանահումքի տեղափոխումն ինքնաշարժ (ավտոմատ) պտտագլխիկների վրա,
8. Ճիշտ է վերահսկում զգված մանահումքից համաչափ և բարակ մանանյութի արտադրական գործընթացը:

**ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻՋՈՑԸ՝**

Ուսանողին կտրվեն հարցեր՝ միջնամանրաթելային մանահումքի զտման սանդեքագզման (սովորական) համակարգի և վերջինիս ինքնաշարժ սնուցմամբ միացքի (ազրեգատի) աշխատանքային գործընթացի մասին: Ուսանողին կտրվի առաջադրանք՝ ցուցադրել մանահումքի սանդեքագզման համակարգի ձեռքով սնուցմամբ միացքի աշխատանքային գործընթացը՝ ներկայացնելով մանահումքի սանդեքագզման համակարգում խառնիչի դերը և մանահումքի խառնակման նշանակությունը: Կհանձնարարվի տեղահանել զգված մանահումքով դանակավոր թմբուկները և կատարել զգված մանահումքի տեղափոխումն ինքնաշարժ (ավտոմատ) պտտագլխիկների վրա:

Արդյունքը կհամարվի ձեռքբերված՝ կատարման բոլոր չափանիշների բավարարման դեպքում:

**ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԸ՝**

Արդյունքի ուսուցումը կատարվելու է դասախոսությունների և գործնական պարապմունքների ձևով: Սովորողին կտրվեն գիտելիքներ՝ միջնամանրաթելային մանահումքի զտման սանդեքագզման (սովորական) համակարգի և վերջինիս ինքնաշարժ սնուցմամբ միացքի (ազրեգատի) աշխատանքային գործընթացի մասին: Գործնական պարապմունքների ժամանակ ուսանողը պետք է կարողանա ցուցադրել մանահումքի սանդեքագզման համակարգի ձեռքով սնուցմամբ միացքի աշխատանքային գործընթացը՝ ներկայացնելով մանահումքի սանդեքագզման համակարգում խառնիչի դերը և մանահումքի խառնակման նշանակությունը, ինչպես նաև տեղահանել զգված մանահումքով դանակավոր թմբուկներն ու կատարել զգված մանահումքի տեղափոխումն ինքնաշարժ (ավտոմատ) պտտագլխիկների վրա:

Արդյունքի ձեռքբերումը բավարար է, եթե ուսանողը ցուցաբերում է անհրաժեշտ կարողություն:

**ՈՒՍՈՒՑՄԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԺԱՄԱՔԱՆԱԿԸ՝**

Տեսական պարապմունք՝ 6 ժամ  
Գործնական աշխատանք՝ 6 ժամ

**ՍՈՂՈՒՄԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ՝**

**«ՄԱՆԱՆՅՈՒԹԻ ՍԱՆՐՈՒՄ»**

**ՍՈՂՈՒՄԻ ԴԱՍԻՉԸ՝**

**ՄԻՏ 3 – 10 - 005**

**ՍՈՂՈՒՄԻ ՏԵՎՈՂՈՒԹՅՈՒՆԸ՝**

**54 ժամ**

**ԴԱՍԸՆԹԱՑԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ ՉԵՎԸ՝**

Տեսական պարապմունք՝ 16 ժամ  
Գործնական աշխատանք՝ 20 ժամ

**ՄՈՒՏՔԱՅԻՆ ՊԱՅԱՆՁՆԵՐԸ՝**

Այս մոդուլն ուսումնասիրելու համար սովորողը պետք է անցած լինի ԱԱՕ 3-10-001 «Ամփտանգություն և առաջին օգնություն», ՄԻՏ 3-10-001 «Թեթև արդյունաբերության հիմունքներ», ՄԻՏ 3-10-002 «Տեքստիլ արդյունաբերության հիմունքներ», ՄԻՏ 3-10-003 «Մանրաթել և մանվածք» և ՄԻՏ 3-10-004 «Մանահումքի փխրեցում և զգում» մոդուլները:

**ՍՈՂՈՒՄԻ ՆՊԱՏԱԿԸ՝**

Այս մոդուլը նշակվել է սովորողի մոտ մանանյութի սանրման արտադրական և սանրող մեքենայի վրա աշխատելու կարողություններ ձևավորելու նպատակով:

**ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ՝**

Այս մոդուլը յուրացնելուց հետո ուսանողը պետք է՝

1. կարողանա ներկայացնել սանրող մեքենայի տեխնիկատեխնոլոգիական բնութագիրը,
2. կարողանա իրագործել սանրող մեքենայի տեխնիկատեխնոլոգիական շահագործումը,
3. կարողանա իրականացնել մանանյութի սանրման արտադրություն:

**ԳՆԱՀԱՏՄԱՆ ԿԱՐԳԸ՝**

Սողուլի ընդունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար նախատեսված կատարման չափանիշների բավարար մակարդակի ապահովումն է:

**ԱՐԴՅՈՒՆՔ 1.** Կարող է ներկայացնել սանրող մեքենայի տեխնիկատեխնոլոգիական բնութագիրը:

**ԿԱՏԱՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ՝**

1. ճիշտ է ցուցադրում սանրող մեքենայի աշխատանքային հիմնական միացքները (ագրեգատներն), հանգույցներն ու մասերը,
2. ճիշտ է բացատրում սանրող մեքենայի աշխատանքային հիմնական գործողությունները և դրանց սկզբունքները,
3. ճիշտ է մեկնաբանում սանրող մեքենայի աշխատանքի ընթացքում առաջացող ընդհատումների պատճառները,
4. ճիշտ է բացահայտում սանրող մեքենայի անսարքությունները,
5. ճիշտ է սահմանում տարբեր մակնիշի սանրող մեքենաների առավելություններն ու թերությունները:

**ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻՋՈՑԸ՝**

Ուսանողին կտրվեն հարցեր՝ սանրող մեքենայի աշխատանքային հիմնական միացքների (ագրեգատների), հանգույցների ու մասերի մասին: Ուսանողին կտրվի առաջադրանք՝ բացատրել սանրող մեքենայի աշխատանքային հիմնական գործողությունները և դրանց սկզբունքները, ինչպես նաև մեկնաբանել սանրող մեքենայի աշխատանքի ընթացքում առաջացող ընդհատումների պատճառները:

Արդյունքը կհամարվի ձեռքբերված՝ կատարման բոլոր չափանիշների բավարարման դեպքում:

**ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԸ՝**

Արդյունքի ուսուցումը կատարվելու է դասախոսությունների և գործնական պարապմունքների ձևով: Սովորողին կտրվեն գիտելիքներ՝ սանրող մեքենայի աշխատանքային հիմնական միացքների (ագրեգատների), հանգույցների ու մասերի մասին: Գործնական պարապմունքների ժամանակ ուսանողը պետք է կարողանա ցուցադրել սանրող մեքենայի աշխատանքային հիմնական գործողությունները, բացահայտել սանրող մեքենայի անսարքությունները:

Արդյունքի ձեռքբերումը բավարար է, եթե ուսանողը ցուցաբերում է անհրաժեշտ կարողություն:

**ՈՒՍՈՒՑՄԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԺԱՄԱՔԱՆԱԿԸ՝**

Տեսական պարապմունք՝	4 ժամ
Գործնական աշխատանք՝	4 ժամ

**ԱՐԴՅՈՒՆՔ 2.** Կարող է իրագործել սանրող մեքենայի տեխնիկատեխնոլոգիական շահագործումը:

**ԿԱՏԱՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ՝**

1. Ճիշտ է կատարում սանրող մեքենայի տեխնոլոգիական շահագործման նախապատրաստական աշխատանքները,
2. Ճիշտ է լիցքավորում սանրող մեքենայի թելակոճերը,
3. Ճիշտ է միացնում և գործարկում սանրող մեքենան,
4. Ճիշտ է վերահսկում սանրող մեքենայի աշխատանքային գործողությունները,
5. Ճիշտ է վերացնում սանրող մեքենայի աշխատանքի ընթացքում առաջացող մանր անսարքությունները,
6. Ճիշտ է պահպանում սանրող մեքենայի շահագործման տեխնիկական անվտանգության կանոնները:

**ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻՋՈՑԸ՝**

Ուսանողին կտրվեն հարցեր սանրող մեքենայի տեխնոլոգիական շահագործման նախապատրաստական աշխատանքների, լիցքավորման, միացման ու գործարկման մասին: Ուսանողին կտրվի առաջադրանք՝ բացատրել սանրող մեքենայի աշխատանքի ընթացքում առաջացող մանր անսարքությունները: Թեստային առաջադրանքների կիրառմամբ կստուգվի ուսանողի իմացությունը սանրող մեքենայի շահագործման տեխնիկական անվտանգության կանոնների պահպանման մասին: Արդյունքը կհամարվի ձեռքբերված՝ կատարման բոլոր չափանիշների բավարարման դեպքում:

**ՄԵԹՈՂԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԸ՝**

Արդյունքի ուսուցումը կատարվելու է դասախոսությունների և գործնական պարապմունքների ձևով: Սովորողին կտրվեն գիտելիքներ՝ սանրող մեքենայի տեխնոլոգիական շահագործման նախապատրաստական աշխատանքների, լիցքավորման, միացման ու գործարկման մասին: Գործնական պարապմունքների ժամանակ ուսանողը պետք է կարողանա լիցքավորել, միացնել, գործարկել սանրող մեքենան, բացահայտել և վերացնել անսարքությունները՝ խստագույնս պահպանելով տեխնիկայի շահագործման անվտանգության կանոնները: Արդյունքի ձեռքբերումը բավարար է, եթե ուսանողը ցուցաբերում է անհրաժեշտ կարողություն:

**ՈՒՍՈՒՑՄԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԺԱՄԱՔԱՆԱԿԸ՝**

Տեսական պարապմունք՝	6 ժամ
Գործնական աշխատանք՝	8 ժամ

**ԱՐԴՅՈՒՆՔ 3.** Կարող է իրականացնել մանանյութի սանրման արտադրությունը:

**ԿԱՏԱՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ՝**

1. Ճիշտ է ներկայացնում մանահումքի սանրման դերն ու նշանակությունը,
2. Ճիշտ է կատարում մանահումքի սանրմամբ տարատեսակ խառնուկների հեռացում,
3. Ճիշտ է կատարում մանահումքում մանրաթելերի հարթուղղում,
4. Ճիշտ է ապահովում մանահումքում մանրաթելերի զուգընթացականությունը,
5. Ճիշտ է ապահովում բարձր համահարթվածությամբ սանրաժապավենի արտադրությունը:

**ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻՋՈՑԸ՝**

Ուսանողին կտրվեն հարցեր՝ մանահումքի սանրման դերի ու նշանակության մասին: Ուսանողին կտրվի առաջադրանք՝ կատարել մանահումքի սանրմամբ տարատեսակ խառնուկների հեռացում և մանահումքում մանրաթելերի հարթուղղում: Կհանձնարարվի ապահովել մանահումքում մանրաթելերի զուգընթացականությունը և սանրաժապավենի համահարթվածությունը: Արդյունքը կհամարվի ձեռքբերված՝ կատարման բոլոր չափանիշների բավարարման դեպքում:

**ՄԵԹՈՂԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԸ՝**

Արդյունքի ուսուցումը կատարվելու է դասախոսությունների և գործնական պարապմունքների ձևով: Սովորողին կտրվեն գիտելիքներ՝ մանահումքի սանրման դերի ու նշանակության մասին մասին: Գործնական պարապմունքների ժամանակ ուսանողը պետք է կարողանա կատարել մանահումքի սանրմամբ տարատեսակ խառնուկների հեռացում և մանահումքում մանրաթելերի հարթուղղում: Արդյունքի ձեռքբերումը բավարար է, եթե ուսանողը ցուցաբերում է անհրաժեշտ կարողություն:

**ՈՒՍՈՒՑՄԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԺԱՄԱՔԱՆԱԿԸ՝**



Տեսական պարապմունք՝  
Գործնական աշխատանք՝

6 ժամ  
8 ժամ

**ՍՈՂՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ՝**  
**ՍՈՂՈՒԼԻ ԴԱՍԻՉԸ՝**  
**ՍՈՂՈՒԼԻ ՏԵԿՆՈԼՈԳԻԱԿԱՆ**  
**ԴԱՍԸՆԹԱՑԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ ՁԵՎԸ՝**

**« ԺԱՊԱՎԵՆԱԹԵԼԻ ԱՐՏԱԴՐՈՒԹՅԱՆ ՏԵԽՆՈԼՈԳԻԱ »**  
**ՄԻՏ 3 – 10 - 006**  
**54 ժամ**  
**Տեսական պարապմունք՝ 24 ժամ**  
**Գործնական աշխատանք՝ 30 ժամ**

#### **ՄՈՒՏՔԱՅԻՆ ՊԱՅԱՆՋՆԵՐԸ՝**

Այս մոդուլը ուսումնասիրելու համար, ուսանող պետք է նախապես ուսումնասիրած լինի ԱԱՕ 3-10-001 «Անվտանգություն և առաջին օգնություն», ՄԻՏ 3-10-003 «Մանրաթել և մանվածք», ՄԻՏ 3-10-004 «Մանահունքի փխրեցում և զգում» և ՄԻՏ 3-10-005 «Մանանյութի սանրում» մոդուլները:

#### **ՍՈՂՈՒԼԻ ՆՊԱՏԱԿԸ՝**

Այս մոդուլը մշակվել է սովորողի մոտ ժապավենաթել արտադրող մեքենայի վրա աշխատելու գործնական կարողություններ ձևավորելու նպատակով:

#### **ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ՝**

Այս մոդուլը յուրացնելուց հետո ուսանողը պետք է՝

1. կարողանա ցուցաբերել ժապավենաթելի ֆիզիկա - մեխանիկական հատկանիշների և արտադրության մասին ընդհանուր պատկերացում,
2. կարողանա դրսևորել ժապավենաթել արտադրող մեքենաների տեխնոլոգիական առանձնահատկությունների իմացություն,
3. կարողանա իրագործել ժապավենաթել արտադրող մեքենայի շահագործում և արտադրական գործընթացի հսկողություն,
4. կարողանա իրականացնել ժապավենաթել արտադրող մեքենայի տեխնիկական խնամք:

#### **ԳՆԱՀԱՏՄԱՆ ԿԱՐԳԸ՝**

Մոդուլի ընդունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար նախատեսված կատարման չափանիշների բավարար մակարդակի ապահովումն է:

**ԱՐԴՅՈՒՆՔ 1.** Կարող է ցուցաբերել ժապավենաթելի ֆիզիկա - մեխանիկական հատկանիշների և արտադրության մասին ընդհանուր պատկերացում:

#### **ԿԱՏԱՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ՝**

1. ճիշտ է ներկայացնում ժապավենաթելի կառուցվածքը, մակերևութային հարթուղվածությունը, հաստությունը և գծային խտությունը,
2. ճիշտ է բացատրում սանրաժապավենից ժապավենաթելի ստացման տեխնոլոգիական գործընթացների հաջորդականությունը,
3. ճիշտ է բացատրում ժապավենաթելի պատրաստման ընթացքում արտադրական թափոնների առաջացման պատճառները:

#### **ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻՋՈՑԸ՝**

Ուսանողին կտրվեն հարցեր՝ ժապավենաթելի կառուցվածքի, մակերևութային հարթուղվածության, հաստության և գծային խտության մասին: Ուսանողին կտրվի առաջադրանք՝ բացատրել սանրաժապավենից ժապավենաթելի ստացման տեխնոլոգիական գործընթացների հաջորդականությունը, ինչպես նաև ժապավենաթելի պատրաստման ընթացքում արտադրական թափոնների առաջացման պատճառները:

Արդյունքը կհամարվի ձեռքբերված՝ կատարման բոլոր չափանիշների բավարարման դեպքում:

#### **ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԸ՝**

Արդյունքի ուսուցումը կատարվելու է դասախոսությունների և գործնական պարապմունքների ձևով: Սովորողին կտրվեն զիտելիքներ՝ ժապավենաթելի կառուցվածքի, մակերևութային հարթուղվածության, հաստության և գծային խտության մասին: Գործնական պարապմունքների ժամանակ ուսանողը պետք է կարողանա բացատրել և ցուցադրել սանրաժապավենից ժապավենաթելի ստացման տեխնոլոգիական գործընթացների հաջորդականությունը, ինչպես նաև ժապավենաթելի պատրաստման ընթացքում արտադրական թափոնների առաջացման պատճառներն ու դրանց վերացման ուղիները:

Արդյունքի ձեռքբերումը բավարար է, եթե ուսանողը ցուցաբերում է անհրաժեշտ կարողություն:

#### **ՌԻՍՈՒՑՄԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԺԱՍՆՔԱՆԱԿԸ՝**

Տեսական պարապմունք՝ 6 ժամ  
Գործնական աշխատանք՝ 6 ժամ

**ԱՐԴՅՈՒՆՔ 2.** Կարող է դրսևորել ժապավենաթել արտադրող մեքենաների տեխնիկատեխնոլոգիական առանձնահատկությունների իմացություն:

**ԿԱՏԱՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ՝**

1. ճիշտ է թվարկում ժապավենաթել արտադրող մեքենաները,
2. ճիշտ է ներկայացնում ժապավենաթել արտադրող մեքենաների ընդհանուր կառուցվածքը,
3. ճիշտ է ցուցադրում ժապավենաթել արտադրող մեքենաների հիմնական աշխատանքային հանգույցները՝ բացատրելով դրանցից յուրաքանչյուրի նշանակությունը,
4. ճիշտ է բացատրում ժապավենաթել արտադրող մեքենաների աշխատանքային սկզբունքները:

**ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻՋՈՑԸ՝**

Ուսանողին կտրվեն հարցեր՝ ժապավենաթել արտադրող մեքենաները, դրանց ընդհանուր կառուցվածքի և հիմնական աշխատանքային հանգույցների մասին: Ուսանողին կտրվի առաջադրանք՝ բացատրել ժապավենաթել արտադրող մեքենաների աշխատանքային սկզբունքները:

Արդյունքը կհամարվի ձեռքբերված՝ կատարման բոլոր չափանիշների բավարարման դեպքում:

**ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԸ՝**

Արդյունքի ուսուցումը կատարվելու է դասախոսությունների և գործնական պարապմունքների ձևով: Սովորողին կտրվեն գիտելիքներ՝ ժապավենաթել արտադրող մեքենաները, դրանց ընդհանուր կառուցվածքի և հիմնական աշխատանքային հանգույցների մասին: Գործնական պարապմունքների ժամանակ ուսանողը պետք է կարողանա բացատրել և ցուցադրել ժապավենաթել արտադրող մեքենաների աշխատանքային սկզբունքները

Արդյունքի ձեռքբերումը բավարար է, եթե ուսանողը ցուցաբերում է անհրաժեշտ կարողություն:

**ՌԻՍՈՒՑՄԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԺԱՄԱՔԱՆԱԿԸ՝**

Տեսական պարապմունք՝ 6 ժամ  
Գործնական աշխատանք՝ 8 ժամ

**ԱՐԴՅՈՒՆՔ 3.** Կարող է իրագործել ժապավենաթել արտադրող մեքենայի շահագործում և արտադրական գործընթացի հսկողություն:

**ԿԱՏԱՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ՝**

1. ճիշտ է ներկայացնում ժապավենաթել արտադրող մանածագործի աշխատանքային պարտականությունները,
2. ճիշտ է միացնում և անջատում ժապավենաթել արտադրող մեքենան,
3. ճիշտ է կատարում ժապավենաթելի համահարթեցում և համահավասարեցում,
4. ճիշտ է կատարում ժապավենաթելի ձգում՝ միաժամանակ կարգավորելով նախատեսվող ձգվածությունը,
5. ճիշտ է իրականացնում ժապավենաթելում մանրաթելերի զուգընթացականության ապահովում,
6. ճիշտ է վերացնում ժապավենաթելի խզվածքները,
7. ճիշտ է տեղադրում ժապավենաթելի համար նախատեսված դատարկ լազանները,
8. ճիշտ է փոխարինում ժապավենաթելի լցոնված լազանները,
9. ճիշտ է ներկայացնում ժապավենաթելի արտադրության ընթացքում առաջացող թափոնների կրճատման միջոցառումները:

**ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻՋՈՑԸ՝**

Ուսանողին կտրվեն հարցեր՝ ժապավենաթել արտադրող մանածագործի աշխատանքային պարտականությունների մասին: Ուսանողին կտրվի առաջադրանք՝ միացնել և անջատել ժապավենաթել արտադրող մեքենան, ինչպես նաև կատարել ժապավենաթելի համահարթեցում, համահավասարեցում, ձգում: Կառաջադրվի վերացնել ժապավենաթելի խզվածքները և դատարկել ժապավենաթելի համար նախատեսված դատարկ լազաններն ու փոխարինել արդեն իսկ լցոնվածները:

Արդյունքը կհամարվի ձեռքբերված՝ կատարման բոլոր չափանիշների բավարարման դեպքում:

**ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԸ՝**

Արդյունքի ուսուցումը կատարվելու է դասախոսությունների և գործնական պարապմունքների ձևով: Սովորողին կտրվեն գիտելիքներ՝ ժապավենաթել արտադրող մանածագործի աշխատանքային պարտականությունների մասին: Գործնական պարապմունքների ժամանակ ուսանողը պետք է կարողանա

միացնել և անջատել ժապավենաթել արտադրող մեքենան, ինչպես նաև կատարել ժապավենաթելի համահարթեցում, համահավասարեցում, ձգում:

Արդյունքի ձեռքբերումը բավարար է, եթե ուսանողը ցուցաբերում է անհրաժեշտ կարողություն:

**ՈՒՍՈՒՑՄԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԺԱՄԱՔԱՆԱԿԸ՝**

Տեսական պարապմունք՝ 6 ժամ  
Գործնական աշխատանք՝ 8 ժամ

**ԱՐԴՅՈՒՆՔ 4.** Կարող է իրականացնել ժապավենաթել արտադրող մեքենայի տեխնիկական խնամք:

**ԿԱՏԱՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ՝**

1. Ճիշտ է փոխարինում ժապավենաթել արտադրող մեքենայի մաշված պահեստամասերը և հարմարանքները,
2. Ճիշտ է պահպանում ժապավենաթել արտադրող մեքենայի տեխնիկական շահագործման կանոնները (յուղում, լվացում, հովացում, լցավորում, թափոնների հեռացում),
3. Ճիշտ է պահպանում ժապավենաթել արտադրող մեքենայի ընթացիկ վերանորոգման ժամանակացույցը,
4. Ճիշտ է իրականացնում ժապավենաթել արտադրող մեքենայի հերթափոխային ընդունման և հանձնման արարողակարգը:

**ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻՋՈՑԸ՝**

Ուսանողին կտրվեն հարցեր՝ ժապավենաթել արտադրող մեքենայի տեխնիկական շահագործման կանոնների (յուղում, լվացում, հովացում, լցավորում, թափոնների հեռացում) մասին: Ուսանողին կտրվի առաջադրանք՝ փոխարինել ժապավենաթել արտադրող մեքենայի մաշված պահեստամասերը և հարմարանքները:

Արդյունքը կհամարվի ձեռքբերված՝ կատարման բոլոր չափանիշների բավարարման դեպքում:

**ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԸ՝**

Արդյունքի ուսուցումը կատարվելու է դասախոսությունների և գործնական պարապմունքների ձևով: Սովորողին կտրվեն գիտելիքներ՝ ժապավենաթել արտադրող մեքենայի տեխնիկական շահագործման կանոնների (յուղում, լվացում, հովացում, լցավորում, թափոնների հեռացում) մասին: Գործնական պարապմունքների ժամանակ ուսանողը պետք է կարողանա փոխարինել ժապավենաթել արտադրող մեքենայի մաշված պահեստամասերը և հարմարանքները, պահպանել ժապավենաթել արտադրող մեքենայի ընթացիկ վերանորոգման ժամանակացույցը, ցուցադրել ժապավենաթել արտադրող մեքենայի հերթափոխային ընդունման և հանձնման արարողակարգը:

Արդյունքի ձեռքբերումը բավարար է, եթե ուսանողը ցուցաբերում է անհրաժեշտ կարողություն:

**ՈՒՍՈՒՑՄԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԺԱՄԱՔԱՆԱԿԸ՝**

Տեսական պարապմունք՝ 6 ժամ  
Գործնական աշխատանք՝ 8 ժամ

**ՄՈԴՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ՝**

**«ՀԱՍՏԱԹԵԼԻ(ՆԱԽԱԹԵԼԻ) ԱՐՏԱԴՐՈՒԹՅԱՆ ՏԵԽՆՈԼՈԳԻԱ»**

**ՄՈԴՈՒԼԻ ԴԱՍԻՉԸ՝**

**ՄԻՏ 3 – 10 - 007**

**ՄՈԴՈՒԼԻ ՏԵՎՈՐՈՒԹՅՈՒՆԸ՝**

**54 ժամ**

**ԴԱՍԸՆԹԱՑԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ ՉԵՎԸ՝**

Տեսական պարապմունք՝ 24 ժամ  
Գործնական աշխատանք՝ 30 ժամ

**ՄՈՒՏՔԱՅԻՆ ՊԱՐԱՆՁՆԵՐԸ՝**

Այս մոդուլն ուսումնասիրելու համար, ուսանող պետք է նախապես ուսումնասիրած լինի ԱՕՕ 3-10-001 «Անվտանգություն և առաջին օգնություն», ՄԻՏ 3-10-003 «Մանրաթել և մանվածք», ՄԻՏ 3-10-004 «Մանահումքի փխրեցում և զգում» , ՄԻՏ 3-10-005 «Մանանյութի սանրում» և ՄԻՏ 3-10-006 «Ժապավենաթելի արտադրության տեխնոլոգիա» մոդուլները:

**ՄՈԴՈՒԼԻ ՆՊԱՏԱԿԸ՝**

Այս մոդուլը մշակվել է սովորողի մոտ հաստատել (նախաթել, սկզբնաթել) արտադրող մեքենայի վրա աշխատելու գործնական կարողություններ ձևավորելու նպատակով:

**ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ՝**

Այս մոդուլը յուրացնելուց հետո ուսանողը պետք է՝

1. կարողանա ընդհանուր պատկերացում տալ հաստատելի ֆիզիկա - մեխանիկական հատկանիշների և արտադրության մասին,

2. կարողանա ցուցաբերել հաստաթել արտադրող մեքենաների տեխնիկատեխնոլոգիական առանձնահատկությունների իմացություն,
3. կարողանա իրագործել հաստաթել արտադրող մեքենայի շահագործում,
4. կարողանա իրականացնել հաստաթելի արտադրության գործընթացի հսկողություն,
5. կարողանա ցուցադրել հաստաթել արտադրող մեքենայի տեխնիկական խնամքի իմացություն:

**ԳՆԱՀԱՏՄԱՆ ԿԱՐԳԸ՝**

Մոդուլի ընդունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար նախատեսված կատարման չափանիշների բավարար մակարդակի ապահովումն է:

**ԱՐԴՅՈՒՔ 1.** Կարող է ընդհանուր պատկերացում տալ հաստաթելի ֆիզիկա - մեխանիկական հատկանիշների և արտադրության մասին:

**ԿԱՏԱՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ՝**

1. ճիշտ է ներկայացնում հաստաթելի կառուցվածքը, մակերևութային հարթուղվածությունը, հաստությունը և գծային խտությունը,
2. ճիշտ է բացատրում ժապավենաթելց հաստաթելի ստացման տեխնոլոգիական գործընթացների հաջորդականությունը,
3. ճիշտ է բացատրում հաստաթելի պատրաստման ընթացքում արտադրական թափոնների առաջացման պատճառները:

**ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻՋՈՑԸ՝**

Ուսանողին կառաջադրվի ներկայացնել հաստաթելի կառուցվածքը, մակերևութային հարթուղվածությունը, հաստությունը և գծային խտությունը: Կհանձնարարվի բացատրել ժապավենաթելց հաստաթելի ստացման տեխնոլոգիական գործընթացների հաջորդականությունը և հաստաթելի պատրաստման ընթացքում արտադրական թափոնների առաջացման պատճառները:

Արդյունքը կհամարվի ձեռքբերված՝ կատարման բոլոր չափանիշների բավարարման դեպքում:

**ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԸ՝**

Արդյունքի ուսուցումը կատարվելու է դասախոսությունների և գործնական պարապմունքների ձևով: Սովորողին կտրվեն գիտելիքներ՝ հաստաթելի կառուցվածքի, մակերևութային հարթուղվածության, հաստության և գծային խտության մասին: Գործնական պարապմունքների ժամանակ ուսանողը պետք է կարողանա բացատրել և ցուցադրել ժապավենաթելց հաստաթելի ստացման տեխնոլոգիական գործընթացների հաջորդականությունն ու հաստաթելի պատրաստման ընթացքում արտադրական թափոնների առաջացման պատճառները:

Արդյունքի ձեռքբերումը բավարար է, եթե ուսանողը ցուցաբերում է անհրաժեշտ կարողություն:

**ՌԻՍՈՒՑՄԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԺԱՄԱՔԱՆԱԿԸ՝**

Տեսական պարապմունք՝	4 ժամ
Գործնական աշխատանք՝	6 ժամ

**ԱՐԴՅՈՒՔ 2.** Կարող է ցուցաբերել հաստաթել արտադրող մեքենաների տեխնիկատեխնոլոգիական առանձնահատկությունների իմացություն:

**ԿԱՏԱՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ՝**

1. ճիշտ է ներկայացնում հաստաթել արտադրող մանածագործի աշխատանքային պարտականությունները,
2. ճիշտ է թվարկում հաստաթել արտադրող մեքենաները,
3. ճիշտ է ներկայացնում հաստաթել արտադրող մեքենաների ընդհանուր կառուցվածքը,
4. ճիշտ է ցուցադրում հաստաթել արտադրող մեքենաների հիմնական աշխատանքային հանգույցները՝ բացատրելով դրանցից յուրաքանչյուրի նշանակությունը,
5. ճիշտ է բացատրում հաստաթել արտադրող մեքենաների աշխատանքային սկզբունքները:

**ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻՋՈՑԸ՝**

Ուսանողին կտրվեն հարցեր՝ հաստաթել արտադրող մանածագործի աշխատանքային պարտականությունների մասին: Կառաջադրվի թվարկել հաստաթել արտադրող մեքենաները, ներկայացնել դրանց ընդհանուր կառուցվածքը՝ ցուցադրելով հիմնական աշխատանքային հանգույցները:

Արդյունքը կհամարվի ձեռքբերված՝ կատարման բոլոր չափանիշների բավարարման դեպքում:

**ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԸ՝**

Արդյունքի ուսուցումը կատարվելու է դասախոսությունների և գործնական պարապմունքների ձևով: Սովորողին կտրվեն գիտելիքներ՝ հաստատել արտադրող մանածագործի աշխատանքային պարտականությունների մասին: Գործնական պարապմունքների ժամանակ ուսանողը պետք է կարողանա ներկայացնել հաստատել արտադրող մեքենաները և դրանց ընդհանուր կառուցվածքը՝ ցուցադրելով հիմնական աշխատանքային հանգույցները, ինչպես նաև բացատրել հաստատել արտադրող մեքենաների աշխատանքային սկզբունքները:

Արդյունքի ձեռքբերումը բավարար է, եթե ուսանողը ցուցաբերում է անհրաժեշտ կարողություն:

**ՈՒՍՈՒՑՄԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԺԱՄԱՔԱՆԱԿԸ՝**

Տեսական պարապմունք՝	4 ժամ
Գործնական աշխատանք՝	6 ժամ

**ԱՐԴՅՈՒՆՔ 3.** Կարող է իրագործել հաստատել արտադրող մեքենայի շահագործում:

**ԿԱՏԱՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ՝**

1. Ճիշտ է միացնում և անջատում հաստատել արտադրող մեքենան,
2. Ճիշտ է հետևում թելակոճերի կամ իլիկների լիցքավորմանը հաստատելով,
3. Ճիշտ է կատարում հաստատելով փաթաթված թելակոճերի կամ իլիկների փոխարինումը,
4. Ճիշտ է կատարում հաստատել արտադրող մեքենայի փեղկերի թափավազքի արագության կարգավորումը,
5. Ճիշտ է ընտրում հաստատել արտադրող մեքենայի նկատմամբ սեփական աշխատատեղն ու աշխատանքային կեցվածքը:

**ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻՋՈՑԸ՝**

Ուսանողին կտրվեն առաջադրանքներ՝ հաստատել արտադրող մեքենան միացնելու և անջատելու վերաբերյալ: Կառաջադրվի հետևել թելակոճերի կամ իլիկների լիցքավորմանը հաստատելով, ինչպես նաև կատարել հաստատելով փաթաթված թելակոճերի կամ իլիկների փոխարինում և փեղկերի թափավազքի արագության կարգավորումը:

Արդյունքը կհամարվի ձեռքբերված՝ կատարման բոլոր չափանիշների բավարարման դեպքում:

**ՄԵԹՈՂԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԸ՝**

Արդյունքի ուսուցումը կատարվելու է դասախոսությունների և գործնական պարապմունքների ձևով: Սովորողին կտրվեն գիտելիքներ՝ հաստատել արտադրող մեքենայի նկատմամբ սեփական աշխատատեղն ու աշխատանքային կեցվածքն ընտրելու մասին: Գործնական պարապմունքների ժամանակ ուսանողը պետք է կարողանա միացնել և անջատել հաստատել արտադրող մեքենան, հետևի թելակոճերի կամ իլիկների լիցքավորմանը հաստատելով, ինչպես նաև կատարի հաստատելով փաթաթված թելակոճերի կամ իլիկների փոխարինում և փեղկերի թափավազքի արագության կարգավորում:

Արդյունքի ձեռքբերումը բավարար է, եթե ուսանողը ցուցաբերում է անհրաժեշտ կարողություն:

**ՈՒՍՈՒՑՄԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԺԱՄԱՔԱՆԱԿԸ՝**

Տեսական պարապմունք՝	6 ժամ
Գործնական աշխատանք՝	6 ժամ

**ԱՐԴՅՈՒՆՔ 4.** Կարող է իրականացնել հաստատելի արտադրության գործընթացի հսկողություն:

**ԿԱՏԱՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ՝**

1. Ճիշտ է վերացնում հաստատելի խզվածքները,
2. Ճիշտ է վերացնում ժապավենաթելի ձգումները և կարգավորել հաստատելի ձգվածությունը,
3. Ճիշտ է հեռացնում հաստացած և/կամ բարակացած ընդհատումները ( բացթողումները),
4. Ճիշտ է հետևում սանրակատարների աշխատանքին՝ սանրակատարներով ժապավենաթելի սահուն ընթացքին և հաստատելի փաթաթմանը:

**ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻՋՈՑԸ՝**

Ուսանողին կտրվեն հարցեր՝ հաստատելի խզվածքները վերացնելու մասին: Ուսանողին կտրվի առաջադրանք՝ վերացնել ժապավենաթելի ձգումները և կարգավորել հաստատելի ձգվածությունը, հեռացնել հաստացած և/կամ բարակացած ընդհատումները (բացթողումները), հետևել սանրակատարների աշխատանքին:

Արդյունքը կհամարվի ձեռքբերված՝ կատարման բոլոր չափանիշների բավարարման դեպքում:

**ՄԵԹՈՂԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԸ՝**

Արդյունքի ուսուցումը կատարվելու է դասախոսությունների և գործնական պարապմունքների ձևով: Սովորողին կտրվեն գիտելիքներ՝ հաստատելի խզվածքները վերացնելու մասին: Գործնական պարապմունքների ժամանակ ուսանողը պետք է կարողանա վերացնել ժապավենաթելի ձգումները և

կարգավորել հաստաթելի ձգվածությունը, հեռացնել հաստացած և/կամ բարակացած ընդհատումները (բացթողումները), հետևել սանրակատարների աշխատանքին:

Արդյունքի ձեռքբերումը բավարար է, եթե ուսանողը ցուցաբերում է անհրաժեշտ կարողություն:

**ՈՒՍՈՒՑՄԱՆ ԵՐԱՇՆԱՎՈՐՎԱԾ ԺԱՄԱՔԱՆԱԿԸ՝**

Տեսական պարապմունք՝ 6 ժամ  
Գործնական աշխատանք՝ 6 ժամ

**ԱՐԴՅՈՒՆՔ 5.** Կարող է ցուցադրել հաստաթել արտադրող մեքենայի տեխնիկական խնամքի իմացություն:

**ԿԱՏԱՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ՝**

1. ճիշտ է փոխարինում հաստաթել արտադրող մեքենայի մաշված պահեստամասերը և հարմարանքները,
2. ճիշտ է հավաքում և հեռացնում արտադրական թափոնները,
3. ճիշտ է պահպանում հաստաթել արտադրող մեքենայի տեխնիկական շահագործման կանոնները (յուղում, լվացում, հովացում, լցավորում, թափոնների հեռացում),
4. ճիշտ է պահպանում հաստաթել արտադրող մեքենայի ընթացիկ վերանորոգման ժամանակացույցը,
5. ճիշտ է իրականացնում հաստաթել արտադրող մեքենայի հերթափոխային ընդունման և հանձնման արարողակարգը:

**ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻՋՈՑԸ՝**

Ուսանողին կտրվեն հարցեր՝ հաստաթել արտադրող մեքենայի մաշված պահեստամասերը և հարմարանքները փոխարինելու մասին: Ուսանողին կտրվի առաջադրանք՝ հավաքել և հեռացնել արտադրական թափոնները, ցուցադրել հաստաթել արտադրող մեքենայի տեխնիկական շահագործման կանոնները (յուղում, լվացում, հովացում, լցավորում, թափոնների հեռացում), իրականացնել հաստաթել արտադրող մեքենայի հերթափոխային ընդունման և հանձնման արարողակարգը:

Արդյունքը կհամարվի ձեռքբերված՝ կատարման բոլոր չափանիշների բավարարման դեպքում:

**ՄԵԹՈՂԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԸ՝**

Արդյունքի ուսուցումը կատարվելու է դասախոսությունների և գործնական պարապմունքների ձևով: Սովորողին կտրվեն գիտելիքներ՝ հաստաթել արտադրող մեքենայի մաշված պահեստամասերը և հարմարանքները փոխարինելու մասին: Գործնական պարապմունքների ժամանակ ուսանողը պետք է կարողանա հավաքել և հեռացնել արտադրական թափոնները, ցուցադրել հաստաթել արտադրող մեքենայի տեխնիկական շահագործման կանոնները (յուղում, լվացում, հովացում, լցավորում, թափոնների հեռացում), իրականացնել հաստաթել արտադրող մեքենայի հերթափոխային ընդունման և հանձնման արարողակարգը:

Արդյունքի ձեռքբերումը բավարար է, եթե ուսանողը ցուցաբերում է անհրաժեշտ կարողություն:

**ՈՒՍՈՒՑՄԱՆ ԵՐԱՇՆԱՎՈՐՎԱԾ ԺԱՄԱՔԱՆԱԿԸ՝**

Տեսական պարապմունք՝ 4 ժամ  
Գործնական աշխատանք՝ 6 ժամ

**ՍՈՂՈՒՄԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ՝**

**«ՆԱԽԱՄԱՆՎԱԾՔԻ ԱՐՏԱԳՐՈՒԹՅՈՒՆ »**

**ՍՈՂՈՒՄԻ ԴԱՍԻՉԸ՝**

**ՄԻՏ 3 – 010 – 008**

**ՍՈՂՈՒՄԻ ՏԵՎՈՂՈՒԹՅՈՒՆԸ՝**

**36 ժամ**

**ԴԱՍԸՆԹԱՑԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ ՁԵՎԸ՝**

Տեսական պարապմունք՝ 16 ժամ  
Գործնական աշխատանք՝ 20 ժամ

**ՍՈՂՈՒՄԻ ՆՊԱՏԱԿԸ՝**

Սովորողի մոտ ձևավորել նախամանվածք արտադրող (մանածագործական) մեքենայի վրա աշխատելու և նախամանվածք պատրաստելու կարողություններ:

**ՍՈՒՏՔԱՅԻՆ ՊԱՅԱՆՋՆԵՐԸ՝**

Այս մոդուլն ուսումնասիրելու համար սովորողը պետք է անցած լինի ԱԱՕ 3-10-001 «Անվտանգություն և առաջին օգնություն», ՄԻՏ 3-10-001 «Թեթև արդյունաբերության հիմունքներ», ՄԻՏ 3-10-002 «Տեքստիլ արդյունաբերության հիմունքներ», ՄԻՏ 3-10-003 «Մանրաթել և մանվածք», ՄԻՏ 3-10-004 «Մանահունքի փխրեցում և զգում», ՄԻՏ 3-10-005 «Մանանյութի սանրում», ՄԻՏ 3-10-006 «Ժապավենաթելի արտադրության տեխնոլոգիա» և ՄԻՏ 3-10-007 «Հաստաթելի (նախաթելի) արտադրության տեխնոլոգիա» մոդուլները:

**ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ՝**

Այս մոդուլը յուրացնելուց հետո ուսանողը պետք է՝

1. կարողանա դրսևորել ընդհանուր պատկերացում նախամանվածքի ֆիզիկա-մեխանիկական հատկանիշների և արտադրության մասին,
2. կարողանա ցուցաբերել նախամանվածք արտադրող մեքենա-սարքավորումների տեխնիկատեխնոլոգիական առանձնահատկությունների իմացություն,
3. կարողանա իրագործել նախամանվածք արտադրող (ոլորող, ձգող) մեքենաների շահագործում,
4. կարողանա իրականացնել նախամանվածքի արտադրության գործընթացի հսկողություն,
5. կարողանա դրսևորել նախամանվածք արտադրող (ոլորող, ձգող) մեքենաների տեխնիկական խնամքի իմացություն:

**ԳՆԱՀԱՏՄԱՆ ԿԱՐԳԸ՝**

Մոդուլի ընդունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար նախատեսված կատարման չափանիշների բավարար մակարդակի ապահովումն է:

**ԱՐԴՅՈՒՔ 1.** Կարող է դրսևորել ընդհանուր պատկերացում նախամանվածքի ֆիզիկա-մեխանիկական հատկանիշների և արտադրության մասին:

**ԿԱՏԱՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ՝**

1. Ճիշտ է ներկայացնում նախամանվածքի ֆիզիկա - մեխանիկական հատկանիշները,
2. Ճիշտ է բացատրում նախամանվածքի և հաստաթելի (նախաթելի) տարբերությունները,
3. Ճիշտ է բացատրում նախամանվածքի ոլորման տեխնոլոգիական առանձնահատկությունները,
4. Ճիշտ է մեկնաբանում նախապես ոլորված նախամանվածքի հետագա ձգման տեխնոլոգիական առանձնահատկությունները:

**ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻՋՈՑԸ՝**

Ուսանողին կտրվեն հարցեր նախամանվածքի ֆիզիկա - մեխանիկական հատկանիշների վերաբերյալ: Ուսանողին կտրվի առաջադրանք՝ բացատրել և ներկայացնել նախամանվածքի և հաստաթելի (նախաթելի) տարբերությունները, ինչպես նաև նախամանվածքի ոլորման տեխնոլոգիական առանձնահատկությունները:

Արդյունքը կհամարվի ձեռքբերված՝ կատարման բոլոր չափանիշների բավարարման դեպքում:

**ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԸ՝**

Արդյունքի ուսուցումը կատարվելու է դասախոսությունների և գործնական պարապմունքների ձևով: Սովորողին կտրվեն գիտելիքներ՝ նախամանվածքի ֆիզիկա - մեխանիկական հատկանիշների մասին: Գործնական պարապմունքների ժամանակ ուսանողը պետք է կարողանա ներկայացնել նախամանվածքի և հաստաթելի (նախաթելի) տարբերությունները, ինչպես նաև նախամանվածքի ոլորման տեխնոլոգիական առանձնահատկությունները՝ մեկնաբանելով նախապես ոլորված նախամանվածքի հետագա ձգման տեխնոլոգիական առանձնահատկությունները:

Արդյունքի ձեռքբերումը բավարար է, եթե ուսանողը ցուցաբերում է անհրաժեշտ կարողություն:

**ՌԻՍՈՒՑՄԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԺԱՄԱՔԱՆԱԿԸ՝**

Տեսական պարապմունք՝	4 ժամ
Գործնական աշխատանք՝	4 ժամ

**ԱՐԴՅՈՒՔ 2.** Կարող է ցուցաբերել նախամանվածք արտադրող մեքենա-սարքավորումների տեխնիկատեխնոլոգիական առանձնահատկությունների իմացություն:

**ԿԱՏԱՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ՝**

1. Ճիշտ է ներկայացնում նախամանվածք արտադրող մանածագործի աշխատանքային պարտականությունները,
2. Ճիշտ է թվարկում նախամանվածք ոլորող և ձգող մեքենա - սարքավորումները,
3. Ճիշտ է ներկայացնում նախամանվածք ոլորող և ձգող մեքենա - սարքավորումների ընդհանուր կառուցվածքը,
4. Ճիշտ է բացատրում նախամանվածք ոլորող և ձգող մեքենա - սարքավորումների հիմնական աշխատանքային հանգույցների տեխնոլոգիական նշանակությունը,
5. Ճիշտ է բացատրում նախամանվածք ոլորող և ձգող մեքենա - սարքավորումների աշխատանքային սկզբունքները՝ մանման տարբեր համակարգերում:

**ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻՋՈՑԸ՝**

Ուսանողին կտրվեն հարցեր՝ նախամանվածք արտադրող մանածագործի աշխատանքային պարտականությունների մասին: Ուսանողին կտրվի առաջադրանք՝ ներկայացնել նախամանվածք ոլորող և ձգող մեքենա - սարքավորումների ընդհանուր կառուցվածքը, ինչպես նաև բացատրել նախամանվածք ոլորող և ձգող մեքենա - սարքավորումների հիմնական աշխատանքային հանգույցների տեխնոլոգիական նշանակությունն ու աշխատանքային սկզբունքները՝ մանման տարբեր համակարգերում:

Արդյունքը կհամարվի ձեռքբերված՝ կատարման բոլոր չափանիշների բավարարման դեպքում:

**ՄԵԹՈՂԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԸ՝**

Արդյունքի ուսուցումը կատարվելու է դասախոսությունների և գործնական պարապմունքների ձևով: Սովորողին կտրվեն գիտելիքներ՝ նախամանվածք արտադրող մանածագործի աշխատանքային պարտականությունների մասին: Գործնական պարապմունքների ժամանակ ուսանողը պետք է կարողանա թվարկել նախամանվածք ոլորող և ձգող մեքենա - սարքավորումները, դրանց հիմնական աշխատանքային հանգույցների տեխնոլոգիական նշանակությունն ու աշխատանքային սկզբունքները՝ մանման տարբեր համակարգերում:

Արդյունքի ձեռքբերումը բավարար է, եթե ուսանողը ցուցաբերում է անհրաժեշտ կարողություն:

**ՌԻՍԻՑՄԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԺԱՄԱՔԱՆԱԿԸ՝**

Տեսական պարապմունք՝	4 ժամ
Գործնական աշխատանք՝	4 ժամ

**ԱՐԴՅՈՒՆՔ 3.** Կարող է իրագործել նախամանվածք արտադրող (ոլորող, ձգող) մեքենաների շահագործում:

**ԿԱՏԱՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ՝**

1. ճիշտ է միացնում և անջատում նախամանվածք ոլորող մեքենան,
2. ճիշտ է միացնում և անջատում նախամանվածք ձգող մեքենան,
3. ճիշտ է կատարում նախամանվածք ոլորող և ձգող մեքենաների տեխնիկական շահագործման հաջորդական գործողությունները,
4. ճիշտ է ապահովում նախամանվածք ոլորող և ձգող մեքենայի անխափան աշխատանքը,
5. ճիշտ է հեռացնում նախամանվածք ոլորող և ձգող մեքենաներում կուտակված փոշին ու մազմզուկ թափոնները:

**ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻՋՈՑԸ՝**

Ուսանողին կտրվեն առաջադրանքներ՝ նախամանվածք ոլորող և ձգող մեքենաների միացման ու անջատման վերաբերյալ: Ուսանողին կտրվի առաջադրանք՝ կատարել նախամանվածք ոլորող և ձգող մեքենաների տեխնիկական շահագործման հաջորդական գործողությունները՝ ապահովելով դրանց անխափան աշխատանքը:

Արդյունքը կհամարվի ձեռքբերված՝ կատարման բոլոր չափանիշների բավարարման դեպքում:

**ՄԵԹՈՂԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԸ՝**

Արդյունքի ուսուցումը կատարվելու է դասախոսությունների և գործնական պարապմունքների ձևով: Սովորողին կտրվեն գիտելիքներ՝ նախամանվածք ոլորող և ձգող մեքենաների միացման ու անջատման, ինչպես նաև դրանց տեխնիկական շահագործման հաջորդական գործողությունների մասին: Գործնական պարապմունքների ժամանակ ուսանողը պետք է կարողանա ապահովել նախամանվածք ոլորող և ձգող մեքենայի անխափան աշխատանքը, ժամանակին հեռացնել նախամանվածք ոլորող ու ձգող մեքենաներում կուտակված փոշին և մազմզուկ թափոնները:

Արդյունքի ձեռքբերումը բավարար է, եթե ուսանողը ցուցաբերում է անհրաժեշտ կարողություն:

**ՌԻՍԻՑՄԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԺԱՄԱՔԱՆԱԿԸ՝**

Տեսական պարապմունք՝	4 ժամ
Գործնական աշխատանք՝	4 ժամ

**ԱՐԴՅՈՒՆՔ 4.** Կարող է իրականացնել նախամանվածքի արտադրության գործընթացի հսկողություն:

**ԿԱՏԱՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ՝**

1. ճիշտ է իրականացնում նախամանվածքի համաչափ ոլորումը,
2. ճիշտ է կատարում նախամանվածքի համաչափ ձգումները,
3. ճիշտ է ապահովում նախամանվածքի պահանջվող հաստությանը ձգվածությունը,
4. ճիշտ է հետևում նախամանվածքի կծկմանը (փաթաթմանը):

**ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻՋՈՑԸ՝**

Ուսանողին կտրվեն հարցեր՝ նախամանվածքի համաչափ ոլորման և ձգման վերաբերյալ: Ուսանողին կտրվի առաջադրանք՝ ապահովել նախամանվածքի պահանջվող հաստությանը ձգվածությունը և հետևել նախամանվածքի կծկմանը (փաթաթմանը):

Արդյունքը կհամարվի ձեռքբերված՝ կատարման բոլոր չափանիշների բավարարման դեպքում:

**ՄԵԹՈՂԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԸ՝**



Արդյունքի ուսուցումը կատարվելու է դասախոսությունների և գործնական պարապմունքների ձևով: Սովորողին կտրվեն գիտելիքներ՝ նախամանվածքի համաչափ ոլորման և ձգման գործընթացների մասին: Գործնական պարապմունքների ժամանակ ուսանողը պետք է կարողանա կատարել նախամանվածքի համաչափ ոլորում և ձգում՝ ապահովելով նախամանվածքի պահանջվող հաստությամբ ձգվածություն: Արդյունքի ձեռքբերումը բավարար է, եթե ուսանողը ցուցաբերում է անհրաժեշտ կարողություն:

**ՈՒՍՈՒՑՄԱՆ ԵՐԱՇՆԱՎՈՐՎԱԾ ԺԱՄԱՔԱՆԱԿԸ՝**

Տեսական պարապմունք՝	2 ժամ
Գործնական աշխատանք՝	4 ժամ

**ԱՐԴՅՈՒՆՔ 5.** Կարող է դրսևորել նախամանվածք արտադրող (ոլորող, ձգող) մեքենաների տեխնիկական խնամքի իմացություն:

**ԿԱՏԱՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ՝**

1. Ճիշտ է փխտորոշում նախամանվածք ոլորող և ձգող մեքենաների մանր անսարքությունները,
2. Ճիշտ է վերացնում նախամանվածք ոլորող և ձգող մեքենաների մանր անսարքությունները,
3. Ճիշտ է պահպանում նախամանվածք ոլորող և ձգող մեքենաների շահագործման տեխնիկական ու անվտանգության կանոնները,
4. Ճիշտ է պահպանում նախամանվածք ոլորող և ձգող մեքենաների ընթացիկ վերանորոգման ժամանակացույցը,
5. Ճիշտ է իրականացնում նախամանվածք ոլորող և ձգող մեքենաների հերթափոխային ընդունման ու հանձնման արարողակարգը:

**ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻՋՈՑԸ՝**

Ուսանողին կտրվեն հարցեր՝ նախամանվածք ոլորող և ձգող մեքենաների մանր անսարքությունների փխտորոշման վերաբերյալ: Ուսանողին կտրվի առաջադրանք՝ վերացնել նախամանվածք ոլորող և ձգող մեքենաների մանր անսարքությունները՝ ապահովելով նախամանվածք ոլորող և ձգող մեքենաների ընթացիկ վերանորոգման ժամանակացույցը, հերթափոխային ընդունման ու հանձնման արարողակարգը:

Արդյունքը կհամարվի ձեռքբերված՝ կատարման բոլոր չափանիշների բավարարման դեպքում:

**ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԸ՝**

Արդյունքի ուսուցումը կատարվելու է դասախոսությունների և գործնական պարապմունքների ձևով: Սովորողին կտրվեն գիտելիքներ՝ նախամանվածք ոլորող և ձգող մեքենաների մանր անսարքությունների ու դրանց փխտորոշման մասին: Գործնական պարապմունքների ժամանակ ուսանողը պետք է կարողանա վերացնել նախամանվածք ոլորող և ձգող մեքենաների մանր անսարքությունները, պահպանի մեքենաների շահագործման տեխնիկական ու անվտանգության կանոնները, իրականացնի նախամանվածք ոլորող և ձգող մեքենաների հերթափոխային ընդունման ու հանձնման արարողակարգը:

Արդյունքի ձեռքբերումը բավարար է, եթե ուսանողը ցուցաբերում է անհրաժեշտ կարողություն:

**ՈՒՍՈՒՑՄԱՆ ԵՐԱՇՆԱՎՈՐՎԱԾ ԺԱՄԱՔԱՆԱԿԸ՝**

Տեսական պարապմունք՝	2 ժամ
Գործնական աշխատանք՝	4 ժամ

**ՍՈՂՈՒՄԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ՝**

**«ՄԱՆՎԱԾՔԻ ԱՐՏԱԴՐՈՒԹՅՈՒՆ »**

**ՍՈՂՈՒՄԻ ԴԱՍԻՉԸ՝**

**ՄԻՏ 3 – 10 – 009**

**ՍՈՂՈՒՄԻ ՏԵՎՈՂՈՒԹՅՈՒՆԸ՝**

**36 ժամ**

**ԴԱՍԸՆԹԱՑԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ ՁԵԿԸ՝**

**Տեսական պարապմունք՝ 16 ժամ**

**Գործնական աշխատանք՝ 20 ժամ**

**ՍՈՒՏՔԱՅԻՆ ԴԱՀԱՆՋՆԵՐԸ՝**

Այս մոդուլն ուսումնասիրելու համար սովորողը պետք է անցած լինի ԱԱՕ 3-10-001 «Անվտանգություն և առաջին օգնություն», ՄԻՏ 3-10-003 «Մանրաթել և մանվածք», ՄԻՏ 3-10-004 «Մանահումքի փխրեցում և գզում», ՄԻՏ 3-10-005 «Մանանյութի սանրում», ՄԻՏ 3-10-006 «Ժապավենաթելի արտադրության տեխնոլոգիա», ՄԻՏ 3-10-007 «Հաստաթելի (նախաթելի) արտադրության տեխնոլոգիա» և ՄԻՏ 3-10-008 «Նախամանվածքի արտադրություն» մոդուլները:

**ՍՈՂՈՒՄԻ ՆՊԱՏԱԿԸ՝**

Այս մոդուլը մշակվել է սովորողի մոտ նախամանվածքի մանման և մանող (մանածագործական) մեքենայի վրա աշխատելու կարողություններ ձևավորելու նպատակով:

**ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ՝**

Այս մոդուլը յուրացնելուց հետո ուսանողը պետք է՝

1. կարողանան ներկայացնել մանող (մանածագործական) մեքենայի տեխնիկական բնութագիրը,
2. կարողանա բացատրել մանող (մանածագործական) մեքենայի աշխատանքային հիմնական հանգույցների կառուցվածքի և աշխատանքային սկզբունքները,
3. կարողանա ներկայացնել մանող (մանածագործական) մեքենայի տեխնոլոգիական գործընթացները,
4. կարողանա բացահայտել մանվածքի արտադրական խտանները և ցուցաբերել դրանց վերացման միջոցառումների իմացություն:

**ԳՆԱՀԱՏՄԱՆ ԿԱՐԳԸ՝**

Մոդուլի ընդունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար նախատեսված կատարման չափանիշների բավարար մակարդակի ապահովումն է:

**ԱՐԴՅՈՒՆՔ 1.** Կարող է ներկայացնել մանող (մանածագործական) մեքենայի տեխնիկական բնութագիրը,

**ԿԱՏԱՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ՝**

1. Ճիշտ է բացատրում մանող/մանածագործական մեքենայի նշանակությունը վերջնամշակված թելի արտադրության գործընթացում,
2. Ճիշտ է բացատրում մանող/մանածագործական մեքենայի ձգման գործընթացը,
3. Ճիշտ է ներկայացնում մանող/մանածագործական մեքենայի ոլորման գործընթացը,
4. Ճիշտ է ներկայացնում մանող/մանածագործական մեքենայի կծկման (փաթաթման) գործընթացը:

**ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻՋՈՑԸ՝**

Ուսանողին կտրվեն հարցեր՝ վերջնամշակված թելի արտադրության գործընթացում մանող/մանածագործական մեքենայի նշանակության, վերջինիս ձգման ու ոլորման գործընթացների վերաբերյալ: Ուսանողին կտրվի առաջադրանք՝ ներկայացնել մանող/մանածագործական մեքենայի կծկման (փաթաթման) գործընթացը:

Արդյունքը կհամարվի ձեռքբերված՝ կատարման բոլոր չափանիշների բավարարման դեպքում:

**ՄԵԹՈՂԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԸ՝**

Արդյունքի ուսուցումը կատարվելու է դասախոսությունների և գործնական պարապմունքների ձևով: Սովորողին կտրվեն գիտելիքներ՝ վերջնամշակված թելի արտադրության գործընթացում մանող/մանածագործական մեքենայի նշանակության, վերջինիս ձգման ու ոլորման գործընթացների մասին: Գործնական պարապմունքների ժամանակ ուսանողը պետք է կարողանա ներկայացնել և բացատրել մանող մեքենայի ձգման, ոլորման ու կծկման գործընթացները:

Արդյունքի ձեռքբերումը բավարար է, եթե ուսանողը ցուցաբերում է անհրաժեշտ կարողություն:

**ՌԻՍՈՒՑՄԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԺԱՄԱՔԱՆԱԿԸ՝**

Տեսական պարապմունք՝	4 ժամ
Գործնական աշխատանք՝	4 ժամ

**ԱՐԴՅՈՒՆՔ 2.** Կարող է բացատրել մանող (մանածագործական) մեքենայի աշխատանքային հիմնական հանգույցների կառուցվածքի և աշխատանքային սկզբունքները:

**ԿԱՏԱՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ՝**

1. Ճիշտ է ներկայացնում մանող/մանածագործական մեքենայի հիմնական աշխատանքային հանգույցները՝ կմախքը, շարժակը, նախամանվածքային հենակը,
2. Ճիշտ է ներկայացնում ձգման սարքի կառուցվածքը՝ բացատրելով աշխատանքային սկզբունքները,
3. Ճիշտ է ներկայացնում ոլորող սարքի կառուցվածքը՝ բացատրելով աշխատանքային սկզբունքները,
4. Ճիշտ է ներկայացնում կծկող (փաթաթող) սարքի կառուցվածքը՝ բացատրելով աշխատանքային սկզբունքները:

**ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻՋՈՑԸ՝**

Ուսանողին կտրվեն հարցեր՝ մանող/մանածագործական մեքենայի հիմնական աշխատանքային հանգույցների՝ կմախքի, շարժակի, նախամանվածքային հենակի վերաբերյալ: Ուսանողին կտրվի առաջադրանք՝ բացատրել ձգման և ոլորման սարքերի կառուցվածքը՝ բացատրելով դրանց աշխատանքային սկզբունքները:

Արդյունքը կհամարվի ձեռքբերված՝ կատարման բոլոր չափանիշների բավարարման դեպքում:

**ՄԵԹՈՂԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԸ՝**

Արդյունքի ուսուցումը կատարվելու է դասախոսությունների և գործնական պարապմունքների ձևով: Սովորողին կտրվեն գիտելիքներ՝ մանող/մանածագործական մեքենայի հիմնական աշխատանքային հանգույցների՝ կմախքի, շարժակի, նախամանվածքային հենակի վերաբերյալ: Գործնական

պարապմունքների ժամանակ ուսանողը պետք է կարողանա ներկայացնել և բացատրել մանող մեքենայի ձգման, ոլորման ու կծկման աշխատանքային սկզբունքները:

Արդյունքի ձեռքբերումը բավարար է, եթե ուսանողը ցուցաբերում է անհրաժեշտ կարողություն:

**ՈՒՍՈՒՑՄԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԺԱՄԱՔԱՆԱԿԸ`**

Տեսական պարապմունք`	4 ժամ
Գործնական աշխատանք`	6 ժամ

**ԱՐԴՅՈՒՆՔ 3.** Կարող է ներկայացնել մանող (մանածագործական) մեքենայի տեխնոլոգիական գործընթացները:

**ԿԱՏԱՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ`**

1. ճիշտ է կատարում նախամանվածքի տեղադրում` նախամանվածքային հենակի վրա,
2. ճիշտ է կատարում նախամանվածքի լիցքավորում` ձգող սարքի միջոցով,
3. ճիշտ է կատարում մանվածքի կծկում (փաթաթում)` պարկուճների վրա,
4. ճիշտ է կատարում մանվածքով փաթաթված պարկուճների տեղահանում ու հանձնում:

**ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻՋՈՑԸ`**

Ուսանողին կտրվեն հարցեր` նախամանվածքի տեղադրման և լիցքավորման վերաբերյալ: Ուսանողին կտրվի առաջադրանք` կատարել նախամանվածքի լիցքավորում, կծկում, տեղահանում և հանձնում: Արդյունքը կհամարվի ձեռքբերված` կատարման բոլոր չափանիշների բավարարման դեպքում:

**ՄԵԹՈՂԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԸ`**

Արդյունքի ուսուցումը կատարվելու է դասախոսությունների և գործնական պարապմունքների ձևով: Սովորողին կտրվեն գիտելիքներ` նախամանվածքի տեղադրման և լիցքավորման վերաբերյալ: Գործնական պարապմունքների ժամանակ ուսանողը պետք է կարողանա կատարել նախամանվածքի լիցքավորում, կծկում, տեղահանում և հանձնում:

Արդյունքի ձեռքբերումը բավարար է, եթե ուսանողը ցուցաբերում է անհրաժեշտ կարողություն:

**ՈՒՍՈՒՑՄԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԺԱՄԱՔԱՆԱԿԸ`**

Տեսական պարապմունք`	4 ժամ
Գործնական աշխատանք`	6 ժամ

**ԱՐԴՅՈՒՆՔ 4.** Կարող է բացահայտել մանվածքի արտադրական խտանները և ցուցաբերել դրանց վերացման միջոցառումների իմացություն:

**ԿԱՏԱՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ`**

1. ճիշտ է բացահայտում մանվածքի արտադրական խտանները,
2. ճիշտ է ներկայացնում մանվածքի արտադրական խտանների վերացման միջոցառումները,
3. ճիշտ է բացատրում մանվածքի կծկման (փաթաթման) խտանները և դրանց վերացման միջոցառումները,
4. ճիշտ է ներկայացնում մանվածքի արտադրության (մանածագործության) ընթացքում առաջացող թափոնները և դրանց վերամշակման տեխնիկական հնարավորությունները:

**ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻՋՈՑԸ`**

Սովորողին կտրվեն հարցեր` մանվածքի արտադրական խտանների բացահայտման ու դրանց վերացման միջոցառումների վերաբերյալ: Կառաջադրվի ներկայացնել մանվածքի արտադրության (մանածագործության) ընթացքում առաջացող թափոններն ու դրանց վերամշակման տեխնիկական հնարավորությունները:

Արդյունքի ձեռքբերումը բավարար է համարվում, եթե ուսանողը հանձնարարությունը ճիշտ է կատարում:

**ՄԵԹՈՂԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԸ`**

Արդյունքի ուսուցումը կատարվելու է դասախոսությունների և գործնական պարապմունքների ձևով: Սովորողին կտրվեն գիտելիքներ` մանվածքի արտադրական խտանների բացահայտման ու դրանց վերացման միջոցառումների վերաբերյալ: Գործնական պարապմունքների ժամանակ ուսանողը պետք է կարողանա բացատրել մանվածքի արտադրական խտանների բացահայտման ու դրանց վերացման միջոցառումները, ներկայացնի մանվածքի արտադրության (մանածագործության) ընթացքում առաջացող թափոններն ու դրանց վերամշակման տեխնիկական հնարավորությունները:

**ՈՒՍՈՒՑՄԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԺԱՄԱՔԱՆԱԿԸ`**

Տեսական պարապմունք`	4 ժամ
---------------------	-------

